


Հ Ս Խ Հ Լ ՈՒ Ս Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ
Մանկավարժության-Մանկաբանության Գիտահետազոտական
Ինստիտուտ

Լ. Խ ՈՒ Դ Ո Յ Ա Ն

Ե Ք Ս Կ ՈՒ Ր Ս Ի Ա Ն Ե Ր
Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ե Լ ՈՒ
Մ Ե Թ Ո Դ Ի Կ Ա Ն
Յ Ե Վ
Տ Ե Խ Ն Ի Կ Ա Ն

Հաստատված է ՀՍԽՀ Լուստոն դիտմանի կողմից



Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ջ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1936

1 MAR 2010

71.2

96

ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍ

Մանկավարժարան-Մանկաբանության Գիտահետազոտական
Ինստիտուտ

371

Լ. ԽՈՒԴՈՅԱՆ

1-24


33253

ԵՔՍԿՈՒՐՄԻԱՆԵՐ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ՄԵԹՈԴԻԿԱՆ
ՅԵԿՆԻԿԱՆ

ՅԵԿ

Հաստատված է ՀՍԽՀ Լուստողիմաստի կողմից

42827



ԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

1936

14 MAR 2013

Պատ. խմբագիր Ն. Ղազարյան
 Լեզվ. խմբագիր Մ. Տ. Դավթյան
 Տեխ. խմբագիր Գ. Զենյան
 Պրեպարիչ Ա. Արզաքանյան



6121-70

Հրատ. 3562, Դրավ. Վ.—315, Պատվ. 1352, Տիրում 1000

Հանձնված և արտադրության 13 դեկտ. 1935 թ.
 Ստորագրված և ապագրելու 2 հունվ. 1936 թ.

Պատրաստի ապարան, Յերեան, II Գնունի № 4.

ԵՔՍԿՈՒՐՍԻՈՆ ՄԵԹՈԴԸ, ՎՈՐՊԵՍ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴ

1. ԵՔՍԿՈՒՐՍԻՈՆ ՄԵԹՈԴԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Համկումկուսի (բ) կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի և 1932 թ. օգոստոսի 25-ի պատմական վորոշումներում դասավանդման մեթոդների մասին հետևյալն է ասվում. «Հիմնական ձևը պետք է հանդիսանա աշակերտի տվյալ խմբի դասը սլարապմունքների վորոշ ցուցակի համաձայն և աշակերտների հաստատուն կազմով... դասատուն պարտավոր է սխտեմատիկաբար և հետեղականորեն ավանդել իր առարկան՝ ըստ ամենայնի վարժեցնելով աշակերտներին ոգտագործել դասադիրքը... Եքսկուրսիաները (դեպի գործարան, թանգարան, դաշտ, անտառ և այլն)։ Ընդամին դասատուն պետք է ամեն կերպ ողնի աշակերտներին, յերբ վերջիններս դժվարությունների հանդիպեն իրենց ուսումնական սլարապմունքներում։ Անհրաժեշտ է աշակերտներին սխտեմատիկաբար վարժեցնել ինքնուրույն աշխատանքի—տալով նրանց դանադան առաջադրանքներ՝ գիտելիքների վորոշ դասընթացը յուրացնելու համար...»։ Աշակերտներին սխտեմատիկաբար ինքնուրույն աշխատանքի վարժեցնելու տեսակետից մեր դպրոցների պայմաններում դասարանական եքսկուրսիաները նույնպես խոշոր արժեք ունեն։ Եքսկուրսիան, նյութի բովանդակության, կոնկրետության և հարստության շնորհիվ, մեծ չափով ակտիվության տարրեր է պարունակում։ Այս տեսակետից եքսկուրսիան մեթոդը նույնպես դասվում է մեր դպրոցում կիրառվող մեթոդների շարքը։ Եքսկուրսիան մեթոդի եյակն արժեքն այն է, վոր հնարավորություն է տալիս իրերը և յերևույթներն իրենց բնական պայմաններում ուսումնասիրելու, յերբ գննողական գիտողական պրոցեսին միաժամանակ զուգորդում է մոտորական պրոցեսը։

Այստեղ յերևան են դալիս դասի հետ կապված մի խումբ յերեվույթների կապակցությունը բնական վիճակում։ Այդ յերևույթների զարգացման ուղիները, և այդ հանգամանքը մեծ հետաքրքրություն է առաջացնում յերեխաների մեջ ուժեղ լծակ հանդիսանալով նրանց մտածողության զարգացման և ըմբռնելու կարողության համար։ Ավելի մեծ չափով հնարավորություն է ստեղծվում կոնկրետ իրերի վրա յերեխաներին ընտելացնելու հետադոտական բնույթի ինքնուրույն

1. Հաջող կազմակերպված եքսկուրսիաները նյութի ուսումնասիրության ժամանակ առաջ են բերում յերեխաների մեջ մեծ հետաքրքրություն, վորով ավելի լրիվ և եֆեկտով են դարձնում իմացական պրոցեսը:

Եքսկուրսիայի հոգեբանական կողմն է այդ:

Հաճախ դասարանում մենք աշխատում ենք վառ պատկերացումներ ստեղծել յերեխաների մեջ՝ շարժելով նրանց հուզական աշխարհը: Մանկավարժական կրթական տեսակետից խոշոր արժեք է պարունակում այդ: Իսկ վորոշ յերևույթների ուսումնասիրության ժամանակ եքսկուրսիաներն ել ավելի յեն շարժում մանկան հետաքրքրական հուզումները, և ուսումնասիրվող յերևույթներն ու առարկաներն իրենց բազմակողմանի կոնկրետությունը ավելի ըմբռնելի յեն դառնում: Յերեխային պատմում ենք մեր շինարարության մեջ աճող գիտնականների մասին, ուզում ենք վոր նա բացի այդ իմանալը, պատկերացնի նաև այդ աշխատանքի վիթխարի լինելու հանքամանքը: Ցանում ենք նրան կառուցելի գործարան, մեր պատմածն այդ մասին շատ չնչին է նրա տեսածի հանդեպ. այստեղ յերեխան տեսնում է մեր շինարարության մեծությունը, նրա պաթոսը, և ինքն ել համակվում է այդ պաթոսով, շարժվում՝ բռնկվում է յերեխայի հուզական աշխարհը: Այդ հույզերի դաստիարակչական նշանակությունը մեծ է, վորովհետև դրանք գոռնեղություն են տալիս յերեխայի իմացականությանը, վորից ել ավելի արժեքավորվում և կայունանում են աշակերտի գիտելիքները և պատկերացումները: Ճիշտ է. խոշոր է կենդանի խոսքի նշանակությունը, բայց յերեք բառերով չի կարելի տալ այն հաճույքը, վոր յերեխան առաջին անգամ ճաշակում է խոշոր մեքենայի աշխատանքը տեսնելով: Մեր դասատուներից շատերը նկատած կլինեն այն փաստը, վոր եքսկուրսիաների ժամանակ հաճախ նույնիսկ թույլ աշակերտները հանդես են բերում վորոշ ակտիվություն, նրանք յերևույթներն սկսում են ավելի լավ ըմբռնել, քան եքսկուրսիայից դուրս:

2. Եքսկուրսիաները խոշոր նշանակություն ունեն գննական տեսակետից՝ վորպես իլյուստրացիաներ տալու և դիտելու միջոց:

Դասերի ժամանակ աշակերտները շատ խնդիրների մասին են լսում, զանազան տեղեկություններ են ձեռք բերում, բայց մի շարք որյեկտների և յերևույթների մասին կոնկրետ պատկերացում չեն ունենում: Այդ առարկաները նրանք վոչ տեսել են վոչ ել դիտել: Դրանց մասին նրանք միայն վերացական պատկերացումներ են կազմում և այն ել հաճախ սխալ պատկերացում: Մինչդեռ մեզ շրջապատող մի շարք յերևույթների մասին ստացած տեղեկություններին հնարավոր է կոնկրետ պատկերացումներ տալ: Որինակի համար, քա-

ղաքի դպրոցներից շատ քչերն են յեղել ողբերկութաբանական կայանում: Նորքի կամուրջը դպրոցներից շատերը չեն տեսել: Մի շարք դպրոցներ չեն հաճախել տեխնիկա-տնտեսական, հեղափոխական, բնագիտական և այլ թանգարաններ:

3. Եքսկուրսիաները կարող են լինել բոլոր առարկաների գծով, ոակայն վոչ բոլոր դեպքերում, այլ համաձայն կոնկրետ նյութի պահանջների. պետք է վերջ տալ այն թյուր հասկացողությանը, վոր եքսկուրսիա տանում են միայն բնագիտության, աշխարհագրության և պոլիտեխնիկական աշխատանքի ուսուցման գծով: Զննականության և կոնկրետության պահանջները վերաբերում են վոչ միայն բնագիտական, աշխարհագրական և պոլիտեխնիկական նյութերին, այլ այդ պահանջները խոշոր չափով վերաբերում են նաև այնպիսի առարկաների, ինչպես պատմություն և, հասարակագիտությունը, գրականությունը և այլն: Այդ դեպքում եքսկուրսիաները՝ միայն լեկցիայի և զրույցի միջոցով ստացած վերացական պատկերացումները՝ կվերածեն կենդանի պատկերների անմիջական տպավորության ըմբռնման:

4. Եքսկուրսիաների նշանակությունը նաև այն է, վոր եքսկուրսիաները հնարավորություն են տալիս ձեռք բերելու մի շարք կոնկրետ և արժեքավոր նյութեր վորոնք հետագայում կծառայեն, վորպես գննական դիդակտիկ պարագաներ (կոլեկցիայի նմուշներ, մոդելներ, հերքարիումներ, տերարիումներ և այլն), իսկ այդ կարիքը մեր դպրոցներում շատ մեծ է. վոչ մի դպրոց չի կարող պարծենալ այդ կարևոր դիդակտիկ նյութերի հարստությամբ:

5. Եքսկուրսիան ունի նաև այն նշանակությունը, վոր բնության ծոցում կատարված եքսկուրսիաներն ուժեղ չափով դարկ են տալիս աշակերտի գեղարվեստական դաստիարակչությանը:

խոշոր է յերեխայի մեջ առաջ յեկած այդ ապրումների, նոր մտապատկերների դաստիարակչական և կրթական նշանակությունը:

Ընդունելով եքսկուրսիոն մեթոդի խոշոր դերը դասավանդության պրոցեսում, մենք հեռու յենք այն մտքից, վոր այդ մեթոդը համարվում է դասավանդման հիմնական ունիվերսալ մի մեթոդ: Ուստի մեզ համար միանգամայն անվիճելի պետք է լինի այն, վոր յուրաքանչյուր եքսկուրսիա պետք է բղխի ծրագրային նյութի բնույթից և հետապնդի այն նպատակները, վորոնք պահանջվում են ամեն մի դասից:

Այժմ անցնենք եքսկուրսիոն մեթոդի հիմնական հատկանիշների բնորոշումներին:

4. ԵՔՍԿՈՒՐՍԻՈՆ ՄԵԹՈԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏՎԱՆԻՇՆԵՐԸ

1. Ամեն մի եքսկուրսիայի առաջին հատկանիշն այն է, վոր այն կապված է մի տեղից մի ուրիշ տեղ տեղափոխվելու հետ:

Եքսկուրսիա բառը լատինական է, վոր նշանակում է «դուրս եմ

վաղում», այսինքն աշխատանքը կատարում եմ սովորական վայրից դուրս: Այս իմաստով դասարանից դուրս կատարվող աշխատանքը եքսկուրսիա պիտի համարել: Յես ուզում եմ յերեխաներին ծանոթացնել ձյան փաթիլների ձևերին, այդ եքսկուրսիա յե, յեթե յերեխաներին յես տանում եմ դպրոցի բակը, ճիշտ այնպես, ինչպես այն դեպքում, յերբ նրանց տանելու լինելի դեպի հունին ծանոթացնելու: Ժամանակի տեղոթյան տեսակետից այդ 2 եքսկուրսիաները տարբերվում են, բայց սկզբունքորեն դրանց մեջ տարբերություն չկա՝ սակայն ձյան փաթիլները մենք կարող ենք դիտել նաև դասարանի լուսամուտներից, այդ արդեն եքսկուրսիա չի լինի, ուստի եքսկուրսիայի հիմնական հատկանիշներից մեկն այն է, վոր մենք մեր աշխատանքի սովորական վայրից դուրս ենք գալիս և գնում ենք դեպի մեզ հետաքրքրող որևէ տեղ, իր տեղում, իր բնական վիճակում ուսումնասիրելու: Այնուհետև եքսկուրսիայի ժամանակ մեծ չափով են տեղի ունենում յերեխայի նաև մոտորային գործողությունները: Ծիշտ ե գործնական լաբորատորական աշխատանքները նույնպես մեծ չափով իրենց մեջ մոտորային ելեմենտներ են պարունակում, բայց սովորական գործնական աշխատանքների և եքսկուրսիոն աշխատանքների տարբերությունը մեծ է: Ամենագլխավոր տարբերությունն այն է, վոր լաբորատորական աշխատանքներում իրերը և յերևույթներն ուսումնասիրվում են վոչ իրենց բնական պայմաններում, կամ շատ հաճախ մենք գործ ենք ունենում վոչ իրական առարկայի հետ, այլ նրա մոդելի, կամ նկարի, մինչդեռ եքսկուրսիայում այդ բոլորը կատարվում է իրական հողի վրա, բնական պայմաններում:

Սակայն այդ դեռ չի նշանակում վոր ամեն մի որոշիտ կամ յերևույթ ուսումնասիրելիս պետք է սովորողներին անպայման եքսկուրսիա տանել: Եքսկուրսիայի ժամանակ մենք փոխադրվում ենք եքսկուրսիայի վայրը, այդ մեզանից թե եներգիա և թե ժամանակ ե խլում. ուստի յուրաքանչյուր եքսկուրսիայի աշխատանք իր տված եֆեկտով պետք է արդարացնի եքսկուրսիան: Թե չե կստացվի այն, վոր շատ հաճախ մենք եքսկուրսիա յենք կատարում նույնիսկ այն դեպքերում, յերբ ուսումնասիրության յենթակա նույն որոշիտն ավելի լավ կարելի յե ուսումնասիրել հենց դասարանում. այդ նշանակում է, վոր եքսկուրսիան չի արդարացնում վոչ գործադրած ժամանակը և վոչ ել եներգիան: Պարզ է՝ յեթե մենք ուսումնասիրելու լինենք յերկրաբանական շերտերը, մենք չենք կարող նույն հանգույցումը այդ նյութն ուսումնասիրել դասարանում, ինչպես այդ հնարավոր է եքսկուրսիայի վայրում: Նույնը և վերաբերում է անտառի, տրակտորի, ելեկտրոկայանի, գործարանի և մեքենայի աշխատանքներն ուսումնասիրելու դեպքում. բայց ինչ կասեք այս կամ այն միջատն ուսումնասիրելու, ծաղիկների կազմվածքը դիտելու և այլ նման դեպքերի մասին: Միթե ծաղիկի կազմությունն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է անպայման գնալ պարտեզ, յերբ նույն ծաղիկը շատ հեշտությունը կարելի յե բե-

րել դասարան. նույնը և միջատների ուսումնասիրության դեպքում: Սակայն վորոշ դեպքերում նույն ծաղիկն ու միջատն անհրաժեշտ է ուսումնասիրել և իր բնական միջավայրում. յերբ դրվում են նրանց աճման պրոցեսի, տարածման, համակեցության խնդիրները և այլն: Այն, ինչ հնարավոր չե դասարանում լրիվ չափով ուսումնասիրել, յեվ այն, ինչ կհրված լինելով իր բնական միջավայրից՝ կորցնում է հիս պատկերացումներ սալու պայմանները, պես է դառնա եֆեկտիվությունը: Ընդհանրապես եքսկուրսիայի որոշիտներն ուսումնասիրելիս կարևորն այն է, թե որոշիտի վոր հատկություններն ենք ուսումնասիրում, կարևորն այսպես ասած մեր նպատակադրումն է:

Նպատակադրումից է կախված այս կամ այն յերևույթի, նյութի դասարանական կամ եքսկուրսիոն ուսումնասիրությունը: Յենթադրենք, թե մենք գնում ենք եքսկուրսիա: Ահա մեր առջև կրաքար, վերցնում ենք այդ կրաքարը. փորձում ենք նրա կարծրությունը, գույնը և այդպիսով դասը տանում ենք բացթիշա. նույնը կարող ենք անել և տուֆի նկատմամբ:

Այդ դասը միթե չե կարելի դասարանում տանել. մի գուցե դասարանում եֆեկտն ավելի պակաս կլինի. վոչ, այդ դասն այդ ձևով, այդ նպատակադրումով դասարանում կամ բնագիտական լաբորատորիայում ավելի արդյունք կտա: Ահա այդպիսի եքսկուրսիաներն են, վոր չեն արդարացնում գործադրած եներգիան և ժամանակը:

Իսկ յեթե մենք նպատակ դնենք ծանոթանալու այն խնդրին, թե ինչպես են այս վայրում կրաքարը կամ տուֆն առաջ յեկել, կրաքարի հեռ հողային շերտերում ուրիշ ինչ քարեր են հաճախ յերևում, ինչից է կախված այդ քարերի ձևը, ինչ խորություն վրա յեն գտնվում և այլն և այլն, իհարկե, այս դեպքում եքսկուրսիա տանելն անհրաժեշտություն կդառնա. այստեղ վոչ դասարանական և վոչ ել կարիներտի պարապմունքները չեն տա դիտելիքների յուրացման այն աստիճանն ինչ աստիճանով այդ յուրացումը ձեռք կբերվի համապատասխան եքսկուրսիայում, հիմք ընդունելով մեր նպատակադրման հետ կապված պահանջները:

Ուստի եքսկուրսիա ասելով մենք հասկանում ենք ուսուցման այն ձևը, յերբ տվյալ նյութի կամ յերևույթի ուսումնասիրությունը կատարում ենք 1. իրենց բնական վիճակում և պայմաններում. 2. երբ այդ ուսումնասիրությունը կապված է մի տեղից մյուսը տեղափոխելու հետ և 3. յերբ այս կամ այն նյութի և յերևույթի մասին դասարանում անկարող ենք լրիվ պատկերացում և պահանջով տեղեկություններ տալ, յերբ յերևույթը կամ առարկան պահանջում են կոնկրետություն, իսկ այդ դասարանում տալ հնարավոր չե:

Ինչպես տեսնում ենք՝ այդ առումով եքսկուրսիոն մեթոդն իր աշխատանքների բնույթով, ինչպես վերևում ասացինք, սինթետիկ

մեթոդ ե. նա ընդգրկում է նյութի մի շարք կողմերը, այլ վոչ թե կենտրոնանում մի հատկության վրա:

Սակայն այդ չի նշանակում, վոր եքսկուրսիայի ժամանակ ամեն ինչի մասին պետք է խոսել. այդ մեզ կշեղի մեր հիմնական նպատակից, և դասը կվերածվի մի կոմպլեքսի: Որինակ գնացել ենք պարտեզ, պտղատու ծառերի ֆասսատուներ ուսումնասիրելու: Այստեղ հանդես են գալու ծառը, միջատը, սակայն այդ չի նշանակում, վոր մենք պետք է բոլոր ծառերի կամ բոլոր միջատների ուսումնասիրությունը կատարենք: Մենք կենտրոնանում ենք միայն ծառի, ֆասսատու միջատների և նրանց տարածվելու յեղանակների վրա: Դասի նպատակադրումը բնույթը, և նյութի լոկալիզացիան հիմնական պայմաններն են լինելու նաև եքսկուրսիայի ժամանակ, ինչպես մյուս դասերին և այդ տեղի ունենում: Նույն ֆասսատու միջատների մասին մենք կարող եյինք դասարանում խոսել, կամ նկարներով տալ, սակայն այս դեպքում պատմողական յեղանակը լրիվ հասկացողություն չէր տա այդ յերևույթի մասին: Որինակ. վորտեղ են միջատի տարածման գլխավոր սֆերաները, նրա դարձացման պայմանները, վոր ծառերի վրա ինչպիսի միջատներ ափելի յեն դարձանում, վոր ծառերն ափելի դիմադրություն են ցույց տալիս և այլն: Եքսկուրսիոն մեթոդը նման նյութերի շուրջն զգալի արդյունք է տալիս և հանդես է բերում աշակերտների մեջ ակտիվություն: Այնուհետև եքսկուրսիոն մեթոդն, ինչպես վերևում նշեցինք, խոշոր չափով նյութ է հայթայթում լաբորատոր աշխատանքների համար:

Եքսկուրսիայի միջոցով բերած նյութերը շատ հաճախ լաբորատորական և հետազոտական աշխատանքների անգնահատելի գիղակտիկ պարագաներ են դառնում: Եքսկուրսիոն մեթոդն ունի նաև այն արժեքը, վոր նա լրիվ չափով բավարարում է ուսուցման գնահատությունյան սկզբունքը, իսկ նյութը դասավանդելու գործում գնահատան միջոցն ունի մի շարք անվիճելի դրական կողմեր, վոր մենք նույնպես պետք է ոգտագործենք: Այն բոլոր հատկությունները, վորոնք վերագրվում են գնահատան մեթոդին, լիովին չափով վերաբերում են եքսկուրսիոն մեթոդին: Եքսկուրսիոն մեթոդի հատկություններից մեկն էլ այն է, վոր այդ մեթոդի ժամանակ ափելի մեծ հնարավորություն է ստեղծվում յերեխաների ինքնուրույնությունը հանդես բերելու: Շատ անգամ դասարանում սովորաբար անուշադիր աշակերտն եքսկուրսիայի ժամանակ մեծ ուշադրություն է աշխատում, կամ դասարանում դանդաղկոտ, անտարբեր աշակերտն եքսկուրսիայի ժամանակ աշխուժանում է:

Պակաս նշանակություն չունի նաև այն հանգամանքը, վոր եքսկուրսիայի ժամանակ աշխատանքները տարվում են դրսում, մաքուր ոդում, և այն, վոր յերեխաները շարժողություն մեջ են լինում. իհարկե այդ չի հիմնականն եքսկուրսիոն աշխատանքներում, սակայն դասարանական զբաղմունքից հետո մերթ-ընդմերթ կատարվող եքսկուրսիոն յերեխաները թարմացնում են յերեխաներին:

Սարանական զբաղմունքից հետո մերթ-ընդմերթ կատարվող եքսկուրսիաները թարմացնում են յերեխաներին:

Խոսելով եքսկուրսիայի գնահատան հատկանիշների և նշանակությունյան մասին, չեն խանգարի մի քանի խոսքով կանգ առնել եքսկուրսիաների հոգեբանական կողմի վրա: Այն հանգամանքը, վոր եքսկուրսիաները կապված են շարժողություն, մի տեղից մյուսը տեղափոխվելու հետ, այդ մեծ հրճվանք է առաջ բերում յերեխաների մեջ: Մտածված, ծրագրված և խելացի կազմակերպված եքսկուրսիան, աշխուժություն հետ միասին շարժում է յերեխաների հոգական աշխարհը և առաջ է բերում հետաքրքրություն դեպի ավանդվող նյութը. այդ հանգամանքը նյութը գիտակցաբար յուրացնելու լավագույն գրավականն է: Եքսկուրսիոն մեթոդի գլխավոր բացն այն է, վոր եքսկուրսիայի ժամանակ միջավայրը չի տալիս անհրաժեշտ հարմարություններ աշխատանքները բաղմազան դարձնելու համար որինակ նորմալ ձևով գրել, նկարել, հաշվել և այլն: Այդ բացը վերացնելու համար անհրաժեշտ է, վոր եքսկուրսիայի տված նյութերը մենք շառնակենք դասարանում կամ լաբորատորիայում մշակել, ամփոփել:

Այնուհետև եքսկուրսիաները ծրագրելիս պետք է հաշվի առնել նյութի բովանդակությունն ու ծավալը, նպատակադրումը, վորքան ժամանակ է հատկացվում եքսկուրսիային, աշակերտների տարիքային առանձնահատկությունները:

Այդ նախապայմաններից կախված է եքսկուրսիայի մեթոդական կառուցվածքը:

Ըստ բովանդակության՝ եքսկուրսիաներ կարող են լինել ուսումնական բոլոր առարկաներից, մի առարկայից համեմատաբար քիչ, մյուսից՝ շատ: Միևնույն առարկայի գծով, նույնիսկ մի թեմայի վերաբերյալ, կարող է եքսկուրսիա լինել, իսկ մյուս թեմայի—վոչ: Ըստ ծավալի՝ եքսկուրսիան կարող է զբաղեցնել մեկ ժամ—մեկ դաս, յերկու դաս, կամ մի քանի դաս. ըստ վորում շատ հաճախ եքսկուրսիայի դասի շարունակությունը մշակվում է ամփոփվում է դասարանում:

Եքսկուրսիաները չեն սահմանափակվում ըստ կոնցենտրների. եքսկուրսիաներ կազմակերպվում են նախադրոցական ուսումնական հիմնարկներից սկսած մինչև բարձրագույն ուսումնական հիմնարկները: Սակայն հաշվի յեն առնվում աշակերտների տարիքային առանձնահատկությունները և նրանց ուսումնական պատրաստությունը: Այնուհետև ըստ տարիքային հատկանիշների եքսկուրսիաների ժամանակ բարձր դասարանների յերեխաներն ափելի ինքնուրույն աշխատանքներ են կատարում, քան ցածր դասարաններին:

Մենք սկզբում ասացինք, վոր եքսկուրսիայի դրական կողմերից մեկն այն է, վոր եքսկուրսիայի ժամանակ աշակերտը գործ ունի

կանկրետ իրերի հետ, կենդանի իրականության հետ: Այդ մոմենտը հնարավորություն է տալիս մեծ չափով նյութը հարստացնելու իշխուստրացիաներով. այնպես վոր յուրաքանչյուր եքսկուրսիա իր մեջ պարունակում է մի շարք իլյուստրատիվ մոմենտներ, մյուս կողմից, մենք գործ ունենալով կոնկրետ որչեկտներ հետ, կենդանի իրականության հետ, համեմատություններ և յեզրակացություններ ենք անում, հավաքած նյութերը վերամշակում ենք, ծանոթանում ենք նրանց հատկություններին. այդ էլ եքսկուրսիաների հետազոտական աշխատանքներն են: Մակայն մի եքսկուրսիայի գերակշռող մոմենտը կարող է լինել իլյուստրատիվ մոմենտը, մյուսինը՝ հետազոտականը:

Յենթագրենք աշակերտներին աշխարհագրության դասին բացատրել ենք աշխարհագրական վորոշ հասկացողություններ. ի՞նչ է կղզին, թերակղզին և այլն: Բացի այն, վոր այդ կարելի չէ և պետք է քարտեզի վրա ցույց տալ, անհրաժեշտ է նաև եքսկուրսիա գնալ գեպի մերձակա գետը, վորտեղ յերեխաներն իրենք ցույց կտան այդ բոլորն իրականում. աշակերտները պարզ և հաստատուն կերպով կըմբռնեն այդ հասկացողությունները:

Բերենք մի որինակ ել. աշակերտը դասարանում սովորում է ելեկտրականության մասին. յերեխաները միշտ ել հետաքրքրվում են, թե ինչպես ելեկտրականության միջոցով լույս է ստացվում, Բացի այն վորձերը, վոր ստացվում են դասարանում և վորոնք թերևս դժվար թե կարողանան պատկերել ելեկտրականության ամբողջ ուժն ու նշանակութունը, աշակերտները կատարում են եքսկուրսիա գեպի ելեկտրական կայան, վորտեղ նրանք ծանոթանում են, թեկուզ ընդհանուր կերպով, թե ի՞նչ մեծ չափով ենեղբիա յե ստացվում, ծանոթանում են ջրի ուժին, տեսնում են զանազան մեքենաներ. տեսնում են, թե ի՞նչպես ելեկտրական ուժով աշխատում են մեքենաները, ի՞նչպես մեքենան թեթեացնում է մարդու աշխատանքը և այլն և այլն: Յերկու դեպքում էլ մենք տեսնում ենք, վոր դասարանում ստացած գիտելիքները, շնորհիվ այդ եքսկուրսիաների, ավելի ուժեղ չափով են պատկերվում և ամրանում աշակերտների գիտակցության մեջ:

Ահա ձեզ մի ուրիշ որինակ ևս. աշակերտները պատմությունից դասարանում անցնում են հին դարը. նրանք սովորում են ուսուցչի պատմածով, դասագրքով, քարտեզ գործածելով, ոգտվում են ոժանդակ աղբյուրներից. բայց յեթե աշակերտները հնարավորություն ունենան այցելելու Կուլտուրայի և Պատմության թանգարանը, տեսնելու պատմական նմուշներ՝ անոթներ, գործիքներ, գեներ, զանազան նկարներ, պարզ է, վոր աշակերտների պատկերացումն ավելի կհարստանա, գիտելիքներն ավելի կամրանան նրանց մեջ:

Ինչպես տեսնում եք՝ եքսկուրսիաներ կարելի չէ կազմակերպել

բոլոր առարկաներից: Մենք որինակներ բերինք աշխարհագրությունից, Ֆիզիկայից, պատմությունից, ել չենք խոսում հասարակագիտության, բնագիտության և այլ առարկաներին վերաբերող եքսկուրսիաների մասին:

Վերև բերած եքսկուրսիաների որինակները ծառայում են վորպես իլյուստրացիա դասարանում և տանը սովորած նյութի: Այդպիսի եքսկուրսիաները հարուստ են իլյուստրատիվ մոմենտներով: Մակայն լինում են եքսկուրսիաներ, վորտեղ իլյուստրատիվ մոմենտների հետ մեծ չափով հանդես են գալիս հետազոտական բնույթի աշխատանքներ:

Այդպիսի եքսկուրսիաների նյութը նույնպես վերաբերում է այս կամ այն առարկայի ծրագրին. այնուհետև նշվում է եքսկուրսիոն աշխատանքի նպատակը, մշակվում է պլանը, և աշակերտները դասաովի ղեկավարությամբ զանազան աշխատանքներ են կատարում—գիտում են, համեմատում, վորձեր են կատարում, հետևություններ և յեզրակացություններ անում. այնուհետև ստացած արդյունքներն ստուգում են, ամփոփում և գալիս են վերջնական յեզրակացության:

Այդպիսի աշխատանք կատարվում է նաև իլյուստրատիվ եքսկուրսիաների ժամանակ: Տարբերությունն այն է, վոր առաջին անգամի եքսկուրսիաների ժամանակ յերեխաները յեզրակացություններ արդեն հանել են և իլյուստրացիաների շնորհիվ ավելի խորացնում են և ամրապնդում իրենց գիտեցածը:

Յերկրորդ տիպի եքսկուրսիաները, վորոնց մեջ հետազոտական բնույթի աշխատանքներն են գերակշռում, ունեն այն նշանակութունը, վոր աշակերտն ավելի մեծ չափով ձեռք է բերում սխտեմատիկ աշխատելու հմտություն, վորովհետև աշխատանքն իր բնույթով այդ է պահանջում: Հետազոտական աշխատանքները սովորեցնում են աշակերտներին վորոշ աշխատանքներ ինքնուրույն կերպով կատարել. աշակերտներն ուսուցչի առաջադրությամբ ուսումնասիրում են առանձին որչեկտները, այնուհետև համեմատում են մեկը մյուսի հետ, ապա ինքնուրույն կերպով յեզրակացություններ են անում:

Յերկու տիպի եքսկուրսիաներն ել մեծ մասամբ չեն բավարարվում եքսկուրսիայի վայրում կատարված աշխատանքներով. պահանջվում է վորոշ նյութերի ուսումնասիրությունը շարունակել դրպրոցում:

«Անհրաժեշտ է աշակերտներին սխտեմատիկաբար վարժեցնել ինքնուրույն աշխատանքի, տարվ նրանց զանազան առաջադրանքներ գիտելիքների վորոշ դասընթացը յուրացնելու համար... աշխատանք լաբորատորիաներում, հերբարիում կազմելը, դպրոցական հողամասի

«ագագործումն ուսումնական նպատակներով» (Համկոմկուսի (բ) կենտկոմի 32 թ. որոշումն 25-ի վորոշումից):

Սակայն անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, վոր խոսելով 2-րդ տիպի եքսկուրսիաների մասին, այսինքն այն եքսկուրսիաների, վորոնց ժամանակ գերակշռում է հետազոտական բնույթի աշխատանքը, չնայած աշակերտների կատարած ինքնուրույն աշխատանքներին, այդ հետազոտական աշխատանքները տարբերվում են գիտական աշխատողների աշխատանքների մեթոդներից, վոր դպրոցական հետազոտական մեթոդը տարբերվում է գիտահետազոտական աշխատանքից, վորը կատարվում է գիտական հիմնարկներում: Դրպեսզի գործադրվող հետազոտական մեթոդի մեջ, անկախ արդյունքներից, կարևորն աշխատանքի պրոցեսն է, յերբ հնարավորություն է ստեղծվում, վոր աշակերտն ինքը հանգի վորոշ յեզրակացություն և ամփոփման. այստեղ նա նոր գյուտ չի անում, նոր խոսք չի ասում, սակայն գիտություն այս կամ այն խնդիրն ուսումնասիրում է և ինքը հանգում է նույն յեզրակացության:

Միանգամայն հասկանալի յե, վոր հետազոտական աշխատանքների բնույթը և ծավալը նույնպես մեծ չափով պայմանավորվում են աշակերտների տարիքային առանձնահատկություններով: Եքսկուրսիան տարրական դպրոցի 3-րդ դասարանում թե բովանդակությամբ և թե բնույթով բոլորովին այլ պետք է լինի քան միջնակարգի 8-րդ դասարանում:

Յեթե 3-րդ դասարանի աշակերտների եքսկուրսիան կընդգրկի հորիզոնի կողմերին վերաբերող հարցերը, կամ բնագիտությունից՝ ծառերի տերևների ուսումնասիրությունը, բարձր դասարաններում աշակերտությունը կընդգրկի ֆնասատունների անատոմիո-ֆիզիոլոգիական կազմության ուսումնասիրությամբ, շրջանի ռեյնֆի ուսումնասիրությամբ և այլն և այլն:

Յենթադրենք, վոր դուք դասարանում աշակերտներին ծանոթացրել եք հողի կազմությանը և շերտերին, կավի, ավազի, կրաքամի մասին տվել եք վորոշ գիտելիքներ: Աշակերտները դասի ժամանակ քննակ սովորել են դրանց դասավորության սխեման. նրանք իրեն տեսներում նույնիսկ պատկերել են այդ դասավորության պրոֆիլը:

Այնուհետև կոնկրետացնելու նպատակով դուք աշակերտներին տանում եք գետի կամ վորեկ փլվածքի ափը, նրանք այն ամենն, ինչ վոր հողի շերտերի մասին սովորել էին դասարանում, տեսնում են իրականում. այդ հանգամանքը շատ խոշոր դաստիարակչական նշանակություն ունի, վորովհետև դասարանում ստացած տեղեկությունները կոնկրետացվում են աշակերտների առջև, լրացվում են մի շարք նոր տարրերով: Դուք զգում եք, թե ինչպես աշակերտներն ուրախ և բավարարված վերադառնում են եքսկուրսիայից:

Ճիշտ է նկատում Ռայկովն եքսկուրսիայի մասին գրած իր գրքում, վոր այդպիսի եքսկուրսիաները թողնում են նույն տպավորություն, ինչ տպավորություն յերեխաներն ստանում են, յերբ նրանք նկարներում տեսած կենդանիները տեսնում են դադանանոցում: Այստեղ գերակշռում են իլյուստրատիվ մոմենտները: Նույն նյութը կարելի յե տանել այնպես, վոր գերակշռեն հետազոտական մոմենտները:

Դասարանում սկզբում տրվում է ընդհանուր տեղեկություն հողի մասին, հողի տեսակները—շերտերը. հետո կազմակերպվում է եքսկուրսիա դեպի գետը, ձորը:

Եքսկուրսիաները ձորում. դիտում են փլվածքի ափի կազմությունը: Դուք նրանց ուշադրությունը դարձնում եք ափի կազմության վրա, թե հողի շերտերը մի տեսակի հող են, թե տարբեր տեսակի հողեր են, չափում են տարբեր շերտերի հաստությունը. վոր շերտն է վերև, ինչպես են դասավորված շերտերը, դրանց ամրությունը: Վերցնում են յուրաքանչյուր շերտից նմուշներ՝ համեմատելու համար: Այնուհետև անցնում են մյուս ափը դիտելու. դիտում է համեմատում են մյուս ափի շերտերի հետ:

Այստեղ նույնպես վերցնում են նմուշներ դասարանում շարունակում են դրանց հատկությունների ուսումնասիրությունը:

Յեթե առաջին դեպքում եքսկուրսիան ծառայց վորպես դասարանում անցած և յուրացրած նյութի կոնկրետացման մի միջոց, յերկրորդ դեպքում եքսկուրսիան միայն, վորպես իլյուստրացիա չըծառայց, այլ դարձավ նաև հետազոտական աշխատանքներ, վորտեղ յերեխաները, բացի այն, վոր իրենց ուժին համապատասխան դիտում են, միևնույն ժամանակ իրենք համեմատում, յեզրակացություններ և հետևություններ անում:

Այդպիսի եքսկուրսիաներ կարելի յե կազմակերպել բոլոր առարկաներից: Յենթադրենք, վոր դուք աշակերտներին զարնանը տարել եք պարտեղ՝ ծանոթացնելու խնձորենու վրա յեղած ֆնասատուններին և նրանց վոչնչացնելու յեղանակներին ու միջոցներին: Դասատուն պոկում է վարակված տերեղ ցույց տալիս յերեխաներին, թե ինչպիսի միջատներ են այդ ֆնասատունները: Այնուհետև պատմում է դրանց զարգացման և բազմանալու յեղանակի մասին:

Յերեխաները պարզ տեսնում են, հետո անցնում են մյուս ծառին: Դասատուն դարձյալ նույն ձևով պոկում է մի տերեղ, համեմատում է շարունակում և պատմել: Այստեղ, ինչպես տեսնում եք գերակշռում է իլյուստրատիվ մոմենտը:

Նույն պարագմունքը կարելի յե տանել այլ ձևով. դասատուն յերեխաներին տանում է խնձորենու մոտ. յերեխաներն սկզբում վոչ մի արտասովոր բան չեն նկատում. առաջարկում է յերեխաներին ուշադրությամբ դիտել տերևների հակառակ կողմերը և պատմել այն

նուհետև նշելով նյութի մասին՝ դասատուն հենց նույն տեղը նշանակում է նպատակը:

Որինակի համար, յենթադրենք, վոր յերրորդ դասարանը եքսկուրսիա յե գնում դեպի բանջարանոց: Նյութը բանջարանոցային բույսերի ուսումնասիրությունն է. անհրաժեշտ է նպատակադրման մեջ կոնկրետ կերպով նշել, թե տվյալ եքսկուրսիայի դասին բանջարանոցային բույսերի վրա տեսակներին են ծանոթանալու և ի՞նչ նոր գիտելիքներ են ձեռք բերելու:

Այդ անհրաժեշտ է, վորովհետև եքսկուրսիայի ժամանակ հիմնական նյութից շեղվելու շարժառիթներն ավելի մեծ են, քան դասարանական պարապմունքների ժամանակ: Յեթե եքսկուրսիայի ընթացքում բոլոր այդ կողմնակի շարժառիթների բացատրությունները տանք, այդ դեպքում յերբեք ժամանակը բավական չի լինի բուն նյութն անցնելու համար:

Ուստի եքսկուրսիա-դասի նյութը և նպատակադրումը պետք է չափազանց պարզ և վորոշակի լինի:

Յերկրորդ խնդիրն եքսկուրսիայի վայրի մասին նախնական վորոշ ծանոթություն ունենալու անհրաժեշտությունն է: Դասատուն մինչև եքսկուրսի գնալը պարտավոր է լավ ծանոթանալ եքսկուրսիայի վայրին, ճանապարհի հարմարություններին, ուսումնասիրության որյեկտներին:

Յերրորդն աշխատանքի կազմակերպչական կողմն է. կազմակերպչական կողմն ընդգրկում է այն նախապատրաստական աշխատանքները, վորոնք կապված են եքսկուրսիայի վայրի և դպրոցից մեկնելու հետ:

Յեթե եքսկուրսիան ուղղվում է վորևե հիմնարկ-ձեռնարկություն, դասատուն նախորոք պետք է պայմանավորվի հիմնարկ-ձեռնարկությունների հետ, մտածի ժամանակի և մի շարք հարմարությունների մասին, վորոնք անհրաժեշտ են եքսկուրսիան հաջողությամբ իրականացնելու համար: Պատահում է, վոր աշակերտներին տանում են այս կամ այն գործարանը, բայց այդ որը գործարանի հանգիստն է, կամ տանում են մի ձեռնարկություն, վորտեղ այդ որը վոչ մի ընդունելություն չունեն. գնում են թանգարան. հիասթափություն—չենք վերանորոգում են. մի ուրիշ դեպքում պատճառաբանում են, վոր այդ քանակի յերեխաներ չեն կարող ընդունել, կամ եքսկուրսիայի պլանով նախատեսված աշխատանքներն այդ որը չեն տարվում:

Մինչև եքսկուրսիա գնալը պետք է աշխատանքի վայրն այնպես կազմակերպել, վոր դասարանն առանց ժամանակ կորցնելու անցնի եքսկուրսիայի աշխատանքներին:

Մինչև եքսկուրսիա մեկնելը դպրոցում նույնպես պետք է նախապատրաստվել. յեթե անհրաժեշտ է՝ մինչև եքսկուրսիա գնալը վոր

որոշ բացատրություններ, կամ նյութերի մասին նախնական տեղեկություններ տալ. այդ բոլորը պետք է նախորոք կատարել՝ եքսկուրսիայի ժամին ավելորդ բացատրություններով և կողմնակի աշխատանքներով չզբաղվելու համար, այսինքն այնպիսի աշխատանքներով, վոր կարելի չե դասարանում կատարել: Մի ուրիշ դեպք. հանկարծ եքսկուրսիայի վայրում անհրաժեշտ է լինում դանակ, ստվարաթուղթ, կամ մի այլ պարագա ունենալ. դասատուն մեկից դանակ է ուղում, մյուսից՝ մի ուրիշ բան, այս չկա, այն չկա, և ամբողջ ժամանակն իրողը է վատնվում:

Դասատուն այդ բոլոր պահանջները և մանրամասնությունները մինչև եքսկուրսիա գնալը պետք է նկատի ունենա և միանգամայն պատրաստված եքսկուրսիայի վայրը մեկնի, վորպեսզի վոչ մի կողմնակի պատճառ չգժվարացնի եքսկուրսիայի նորմալ ընթացքը:

Եքսկուրսիոն աշխատանքների պրոցեսում մյուս ելական մոմենտը եքսկուրսիա-դասը կազմակերպելն է:

6. ԵՐԱՅՈՒՐՈՒՄ. ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ ՅԵՎ ԵՐԱՅՈՒՐՈՒՄ. ՏԱՆԵԼԸ

Դասատուն պետք է իր պլանում ուսումնասիրության յենթակարգյեկտներին հիմնական խնդիրները դնի ու կոնկրետ նշի, թե ի՞նչ հարցեր են ուսումնասիրվելու, աշխատանքն ինչպես պետք է տարվի, ինչպես պետք է տարվեն դիտողությունները ֆրոնտալ, թե խմբակներով: Ֆրոնտալ եքսկուրսիայի ժամանակ բոլոր յերեխաները կատարում են միևնույն աշխատանքը. բոլոր որյեկտները դիտում են միաժամանակ և բոլոր բացատրությունները լսում են միասին:

Սակայն ժամանակի, եքսկուրսիայի վայրի ու մի շարք այլ պայմաններից, ինչպես և աշխատանքի բնույթից յեկնելով՝ եքսկուրսիայի ժամանակ յերբեմն անհրաժեշտություն է առաջ գալիս աշխատանքները տանել վորոշ դեպքերում նաև խմբակներով:

Աշակերտների մի խմբակ հետևում է խնձորենու և տանձենու վնասատուներին և համապատասխան դիտողություններ տնում, մյուս խմբակը մյուս ծառերի. կամ գործարանում մի խմբակ լինում է մի ցեխում, մյուսը մի այլ ցեխում:

Ֆրոնտալ եքսկուրսիաները, յեթե դժվարություններ չկան, ավելի նպատակահարմար են. այս դեպքում դասատուն լինում է բոլորի հետ և աշխատանքները կատարվում են միաժամանակ:

Յերևույթները դիտելիս դասատուն պետք է նկատի ունենա, թե այդ յերևույթներից, վորի մասին իրենք յերեխաները պետք է ինքնուրույն բացատրություն տան, և վոր յերևույթների մասին ինքն ուսուցիչը պետք է բացատրություններ տա:

Հաճախ այս կամ այն յերևույթի վերլուծությունն այնքան պարզ է լինում, վոր յերբեք ել անհրաժեշտ չե դասավորել միջամտությունը:

դասատվի բացատրությունից հետո իրենք աշակերտներն տառնց դժ-
վարություններ յերևուց լինում են: Ուրիշակ՝ աշակերտները
եքսկուրսիա յեն գնացել պարտեզ. դիտում են տերևաթափը: Աշա-
կերտները, ուսուցչի նախնական ցուցումից հետո, ինքնուրույն կերպով
գիտում են ծառերը, վեր ծառի տերևներն են ավելի վաղ թափվել, վեր ծա-
ռերի տերևները մնում են. այնուհետև ջուկում են նման տերևները,
իմանում են ծառերի անունները և այլն և այլն:

Աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է դասատվի անմիջական
ղեկավարությունը: Պլանում դասատուն համառոտակի նշում է նաև
այն, թե եքսկուրսիայից բերած նյութերը ինչպես պետք է հետազա-
յում ոգտագործվեն՝ մանրամասնությունը. խոսելով հաջորդ դասե-
րին: Ընդհանուր առմամբ եքսկուրսիայի պլանը խնդիրները պետք է
բազմակողմանիորեն նախատեսի: Պետք է ամեն կերպ աշխատել, վոր
եքսկուրսիայի ժամանակ պահպանված լինեն պլանի հիմնական կե-
տերը, և ամեն կերպ պետք է խուսափել շեղումներից:

Երկրորդ նշանակութուն ունի աշակերտներին եքսկուրսիայի
վայրում դասավորելը: Ամենից լավն այն է, յերբ աշակերտներն ողա-
կաձև կանգնում են դասատվի շուրջը: Աշակերտներն առաջին շրջա-
գրծի և դասատվի մեջ դեպի առաջ մեկնած մեկ ձեռքի հեռավորու-
թյուն պետք է լինի, վորպեսզի յետևում կանգնածները կարողանան
տեսնել դասատվին. չպետք է յերևեսներին թույլ տալ, ինչպես սո-
վորաբար նրանք միշտ ձգտում են, ընդհուպ մոտենալ դասատվին,
վորով սուղացիչը անկարող կլինի բոլորին տեսնել, և աշակերտներն
եղ չեն կարող ուսուցչին տեսնել: Կենտրոնում գտնվելով նա դուրու-
թյամբ կարող է թե բոլորին տեսնել և թե բոլորին ել ցույց տալ
դասազան որչեպես: Դրա համար դասատուն առարկան ձեռքն է
վերցնում և առանցքաձև պտույտ գործելով ցույց է տալիս առարկան
բոլորին:

Առարկաները տրվում են նաև աշակերտների ձեռքը: Այս դեպ-
քում պետք է պահպանել հետևյալ սկզբունքը. միշտ առարկան շրջ-
ջելու համար պետք է շրջել մի ուղղությամբ՝ ժամացույցի սլաքի
ուղղությամբ. այդպիսով առարկան մեկի ձեռքից մյուսին է անցնում
և վերջը հասնում ուսուցչին: Իսկ յեթե հաջորդում չի ուսուցիչին
վոր որչեպես ձեռքին ունենալ, այդ դեպքում աշակերտները կանգ-
նում են առարկայի շուրջը, սակայն այնպես, վոր դասատուն բոլորին
եղ տեսնի:

Խիստ կերպով պետք է հետևել, վոր եքսկուրսիայի ժամանակ
աշակերտները չթափառեն և չզբաղվեն կողմնակի գործերով, վոր հա-
ձախ տեղի յե ունենում եքսկուրսիաների ժամանակ:

Յեթե եքսկուրսիան դաշտումն է, կամ անտառում, չպիտի թույ-
լատրել, վոր աշակերտները շատ հեռանան, այնպես պետք է լինի,
վոր նրանք լսեն ուսուցչի ձայնը, յեթե վերջինս կանչելու լինի:

Մեծ ուշադրություն պետք է նվիրել որչեպես որչեպես ուսումնա-
սիրությանը, պետք է աշխատել, վոր յուրաքանչյուր որչեպես ըստ
հնարավորության բոլոր աշակերտներն ել շոշափեն: Թվում է, վոր
այդ առանձին ձեռք դասատվից չի պահանջում, սակայն հաճախ դուք
ակնատես եք լինում հետևյալ պատկերին. դասատուն, շրջապատված
աշակերտներով, բացատրում է իր ձեռքին բռնած ծաղիկի կազմու-
թյունը, ծաղիկի բոլորդիան: Աշակերտները, շրջապատած նրան, գլուխ-
ները ձգում են իրար հրում, վոր տեսնեն այդ ծաղիկի մասերը: Մի-
թե չի կարելի այդպիսի դեպքերում այնպես անել, վոր յուրաքան-
չյուր աշակերտի ձեռքին մի ծաղիկ լինի, աշակերտը դիտի,
գննի, նկատի:

Այնուհետև պետք է նախադրուշացնել մի այլ վտանգից, վորը
մեծ չափով բացասաբար է ազդում եքսկուրսիան աշխատանքների
վրա. այդ այն է, վոր եքսկուրսիայի ժամանակ աշակերտները հա-
ձախ մի շարք կողմնակի հարցերով դասատվին շեղում են հիմնական
թեմայից: Եքսկուրսիայի վայրում յեղած յերևույթները շատ են.
բոլորը մի անգամից անկարելի յե ուսուցիչները: Այդ պատճառով
եքսկուրսիա-դասը պետք է կատարվի միայն և միմիայն համաձայն
նախորդը կազմած պլանի: Որինակի համար, դասատուն աշակերտնե-
րի հետ ուսուցիչներում են տվյալ վայրի բուսականությունը, նրա
տեսակները, վորոշ սիստեմի վերածելու համար, հանկարծ աշակերտ-
ներից մեկը դիմում է դասատվին, թե այդ լին միջատ է, լին վը-
նաս է հասցնում, հարցեր, վորոնք վոչ մի կապ չունեն դասի
հետ:

Իհարկե յեթե դասատուն ամեն մի հարցին պատասխանի, նա դասից
կշեղվի: Դրանից իհարկե չպետք է յեղրակացնել, վոր եքսկուրսիայի
ժամանակ աշակերտները հարցեր չպետք է տան: Հարցեր պետք է
լինեն, բայց այդ հարցերը պետք է տրվեն թեմայի կապակցությամբ:
Յերբ հարցերն սկսում են շեղվել բուն նյութից, այստեղ արդեն դա-
սատուն առանց այլևայլության անտեղի հարցերին չպետք է պատա-
խանի բացատրելով, վոր դրանք կապ չունեն տվյալ թեմայի և տրվ-
յալ եքսկուրսիայի հետ, և աշակերտների ուշադրությունը պետք է
կենտրոնացնի նյութի շուրջը:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել աշակերտության կողմից կազ-
մվող դրանցումներին և գծադրումներին: Այդ ձևի աշխատանքները, բա-
ցի այն, վոր նյութ են հանդիսանում հետաքա մշակումների համար,
միևնույն ժամանակ նպաստում են աշակերտներին չեղվել նյութից
և «չհրապուրվել» կողմնակի գործերով, վորոնք եքսկուրսիայի ժա-
մանակ շատ բազմազան են:

Գրանցումները և գծադրումներն կունենան նաև այն նշանակու-
թյունը, վոր ել ավելի յեն տպավորում նյութը և նպաստում լավ
յուրացման:

Այդ տեսակետից մատիտն ու տետրն եքսկուրսիոն պիտու չքնն-
րել շարքում առաջին տեղն են զբաղում:

7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԵՔՍԿՈՒՐՍԻՍՍԵՏ ՎԵՐԱԳՈՐԱՆԱԼՈՒՅ ՀԵՏՈ

Այժմ անցնենք այն խնդրին, թե ինչ պետք է անել դասատուն
եքսկուրսիայից վերադառնալուց հետո:

Եքսկուրսիաները, հանգիստանալով ուսումնական պրոցեսի մի
մոմենտը, սերտ կերպով կապված են լինում ինչպես նախորդ, այն-
պես ել հաջորդ դասի, կամ ուսումնական հաջորդ աշխատանքների
հետ: Այդ տեսակետից հազվադեպ կարող է լինել, վոր եքսկուրսիան
չպահանջի դասարանական կամ լաբորատորական մշակում: Եքսկուր-
սիայում հավաքած նյութերի մշակումը շատ կարևոր է, այլապես
եքսկուրսիան կդառնա վորպես կազմակերպված մի զբոսանք:

Եքսկուրսիայի նյութերի մշակման նշանակությունը նաև այն է,
վոր եքսկուրսիայից վերադառնալուց հետո աշակերտների հիշողու-
թյան մեջ վերականգնում է եքսկուրսիայի ընթացքը, լուսաբանվում
և բացատրվում են տեսած յերևույթները: Կասարանում լրացվում է
խորացվում են եքսկուրսիայում չոչափած առանձին խնդիրները:
Եքսկուրսիան իր նպատակը լրիվ չափով կարող է բավարարել միայն
այն դեպքում, յերբ եքսկուրսիայի ընթացքում հավաքած նյութերն
եքսկուրսիայից հետո մանրամասն կմշակվեն, յերբ եքսկուրսիայի
ընթացքում տեսած և դիտած գործնական մոմենտները տեսականո-
րեն նույնպես կլուսաբանվեն, յերբ եքսկուրսիոն աշխատանքներն
որդանական կերպով կնյութվեն ծրագրային նյութերի հետ և հասկա-
նալի կդարձնեն մինչև եքսկուրսիան, կամ եքսկուրսիայից հետո ձեռք
բերած տեսական վորոշ խնդիրները:

Եքսկուրսիայից վերադառնալուց հետո, հետևյալ դասին, առաջին
հերթին հարց ու պատասխանի միջոցով, կամ պատմելով, աշակերտ-
ները վերհիշում են իրենց տպավորությունները՝ տեսածը, դիտածը,
լսած բացատրությունները: Այնուհետև յուրաքանչյուր աշակերտ
կարգի յե բերում, վորոշ սխտեմի վերածում եքսկուրսիայի ընթաց-
քում արած իր դիտողությունները, գծագրերը, գրանցումները, հա-
վաքած նյութերը: Յեթե աշխատանքները կատարվել են առանձին
խմբակներով, այդ դեպքում յուրաքանչյուր խմբակ մանրամասն ծա-
նոթացնում է իր տեսած որյեկտներին, տալով գծագրերը, նկարնե-
րը այն չափով, վոր ամբողջ դասարանը նույնպես ծանոթանա տվե-
յալ խնդիրներին: Գործնականորեն եքսկուրսիային հաջորդող աշխա-
տանքներն ընթանում են հետևյալ կերպ. աշակերտները կապակցված
կերպով պատմում են իրենց տպավորությունները, աշխատանքներ
են տանում լաբորատորիայում, եքսկուրսիային վերաբերող գրավոր
աշխատանքներ են արվում, աշակերտները համապատասխան կոլեկցիա-
ներ են պատրաստում և այլն և այլն:

Այդպիսով եքսկուրսիայի աշխատանքները սերտ կերպով կապ-
վում են ուսումնական պրոցեսի հետ:

Ինչպես տեսանք, եքսկուրսիան հանդիսանում է դպրոցական
աշխատանքների մեթոդներից մեկը, վորը սերտ կերպով կապվում է
զանազան առարկաների դասավանդման հետ. եքսկուրսիան նույն
դասն է, բայց տարվում է դպրոցից դուրս, և ամեն մի եքսկուրսիա
սերտ կերպով կապվում է նախորդ և հաջորդ դասերի հետ: Միան-
գամայն աննպատակահարմար են այն եքսկուրսիաները, վորոնք դա-
սերից անկախ են տարվում: Եքսկուրսիան կարող է կամ դաս հան-
դիսանալ, կամ դասի լրացուցիչ մի մասը: Այստեղից պետք է յեզ-
րակացնել, վոր եքսկուրսիաների և դասերի մեջ կապ պահպանելու
համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները:

1. Եքսկուրսիաները պետք է համարվեն դպրոցական աշխա-
տանքների անբաժան մի մասը, և եքսկուրսիոն աշխատանքները—
խորհրդային դպրոցում գործադրվող մեթոդներից մեկը:

2. Յուրաքանչյուր դասատու իր առարկաների տարեկալի աշ-
խատանքների պլանը կազմելու ժամանակ, առարկան լրիվ յուրաց-
նելու նպատակով, նախորդ նախատեսում է իր ծրագրում, թե
ինչ եքսկուրսիաներ է կատարելու: Այնուհետև յուրաքանչյուր քա-
տորում դասատուն կազմում է այդ եքսկուրսիաների համառոտ
սխեման:

3. Եքսկուրսիայի ղեկավարություն ամբողջ գործն ընկնում է
դասատվի վրա. վոր մի դեպքում այդ ղեկավարությունը չի կարելի
հանձնարարել կողմնակի անձանց՝ վորոնք առնչություն չունեն դա-
սի հետ:

Ջանազան հիմնարկ-ձեռնարկներին, եքսկուրսիոն կայանների
աշակցությունն այն պետք է լինի, վոր նրանք թեթևացնեն դասատ-
վի աշխատանքները, ստեղծեն համապատասխան միջավայր՝ պատաս-
խանեն զանազան հարցերի: Ընդհանուր ղեկավարությունը դասատվին
վերապահելով, այնուամենայնիվ վորոշ դեպքերում, նամանավանդ
բարձր դասարաններում, մասնագիտական մի շարք խնդիրներին նը-
կատմամբ անշուշտ անհրաժեշտություն կզգացվի դիմել մասնագետի
օգնությունը: Նման դեպքերում դասատուն մասնագետին նախորդ
ծանոթացնում է եքսկուրսիայի կոնկրետ նյութին, նպատակներին և
այն գիտելիքներին ու խնդիրներին պատասխաններին, վորոնք պետք
է ձեռք բերվեն տվյալ եքսկուրսիայում: Այդ ուղղությամբ մասնա-
գետին իրազեկ պահելն ունի այն կարևոր նշանակությունը, վոր
մասնագետը դուրս չի գա դասի նյութի սահմաններից և չի շեղվի բուն
նյութից, ինչպես այդ շատ հաճախ տեղի յե ունենում:

Որինակ՝ աշակերտներին տարել են տեխնիկա-տնտեսական թան-
գարանը՝ ծանոթացնելու մեր յերկրի երկարեփիկացիայի պլանին
Յուրաքանչյուրն այնտեղ շատ հեշտ կերպով կարող է շեղվել բուն նյու-

թից և անցնել մեր արդյունաբերութեան զանազան ճյուղերին, վորոնց մասին դասարանումն ելկարելի յեր խոսել, իսկ բուն նյութը—ելեկտրականների աշխատանքները, դրանց զարգացումը, զանազան գծազբ-րույթները, մոդելների ուսումնասիրութեանն երբ մնում է թերի: Այդ-պես և մյուս եքսկուրսիաներում:

4. Եքսկուրսիաները, վորպես կանոն, պետք է կազմակերպել դասի ձևով, ամեն կերպ պետք է խուսափել դպրոցական ընդհանուր եքսկուրսիաներից, յեթե եքսկուրսիան ծառայում է վորպես դաս:

5. Եքսկուրսիայի ժամանակ պետք է աշխատանքը կազմակերպ-վի միայն և միմիայն իրերի և յերևույթների կոնկրետ ուսումնասի-րութեան շուրջը. յերկար ու բարակ պատմութեանները, տեսական ընդարձակ բացատրութեանները, վորոնք դասարանում սովորական յերևույթ են, եքսկուրսիայի ժամանակ կարող են ձանձրույթ առաջ բերել. Եքսկուրսիայի նյութերին վերաբերող տեսական հիմնական դատողութեանները պետք է տալ կամ մինչև եքսկուրսիա գնալը, կամ եքսկուրսիայից հետո:

8. ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ ՏԵՆՆԻԿԱՆ

Եքսկուրսիոն աշխատանքները բավարար տանելու համար, բա-ցի մեթոդական և կազմակերպչական խնդիրներից, պետք է հաշվի առնել նաև մի շարք տեխնիկական հարցեր, վորոնք սերտ կերպով կապված են այդ աշխատանքներն սկսելու և տանելու հետ և վորոնց ճիշտ լուծումը եքսկուրսիայի հաջողութեան անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում:

Առաջին հերթին անհրաժեշտ է վորոշ պարագաներ ունենալ: Յուրաքանչյուր անգամ եքսկուրսիա գնալիս պետք է վերցնել անհրաժեշտ եքսկուրսիոն պիտույքներ, վորոնք պետք է նպաստեն եքսկուրսիայի վայրում աշխատանքները բավարար տանելուն: Սա-կայն պետք է խուսափել այն տեսակի պիտույքներից, վորոնք հան-դիսանալով բեռ՝ եքսկուրսիայի վայրում մնում են առանց գործա-ծութեան:

Եքսկուրսիոն պիտույքները լինում են ընդհանուր դասարանա-յին և անհատական: Ընդհանուր պիտույքներ մենք համարում ենք այն պարագաները, վորոնք պարտադիր չեն բոլորի համար: Անհա-տական պիտույքներն այն պիտույքներն են, վորոնք պետք է լինեն յուրաքանչյուր աշակերտի մոտ:

Ընդհանուր պարագաներ կարող են լինել.

Քարտեզ, հատակագիծ, քայլաչափ, ջերմաչափ, չափերիզ, հե-ռադիոտակ, խոշորացույց (լուսպ), լուսանկարչական ապարատ, լուց-կի, կացին, փոքրիկ կշիռ, միջատներ վորսալու ցանց:
Անհատական իրեր.

Պայուսակ, մատիտ, թուղթ, ստվարաթղթից թղթապանակ, դա-

նակ և այլն: Դասատուն այս ուղղութեամբ նույնպես նախորդ պետք է աշակերտներին տա անհրաժեշտ իրերի ցուցակը և պատվիրի, վոր յուրաքանչյուր աշակերտ այդ իրերը վերցնի իր հետ:

Գնալուց առաջ անպայման պետք է ստուգել աշակերտների վրտնամանքները, փոքրերի հետ գնալիս պետք է նախորդ յերեխա-ներին հիշեցնել, վոր զուգարան գնան մինչև եքսկուրսիա դուրս գալը:

Գնալիս պետք է քայլին շարքերով՝ յերկու-յերկու: Ընդհանրա-պես պետք է նկատել, վոր յերեխաները փողոցում կանոնավոր քայ-լել չգիտեն. հաճախ դուք փողոցում կպատահեք ցրիվ յեկած աշակերտ-ներին—մեկը մայթով և գնում, մյուսը, փողոցի մեջտեղով և յեթե շարքերով են, շարքերը ձգձգած: Պետք է հետևել, վոր զույգերով քայ-լեն և հավասար, վորպեսզի շարքերը չձգձգվեն:

Յեթե զույգերով կանոնավոր չեն գնում, այդ միևնույն է թե շարքերով չեն գնում և մեկը կամուրջը թողած առվով և թռչում, մյուս-ը կառքի հետևից և վազում, մի յերրորդը մտնում է խանութ և այլն: Կառավարել այդ բոլորին նշանակում է բոլորի հետ ել գործ ունե-նալ: Կանոնավոր շարքերով գնալիս ձեր առջև մեկ միացյալ կոնկ-րետ է, վորին գլխավորում էք դուք, ձեր ուղին յուրաքանչյուրի ուղին է դառնում:

Մյուս կողմից կանոնավոր շարքերով գնալիս ավելի շատ ենք ապահովված զանազան փողոցային պատահարներից:

Իհարկե այդ չի նշանակում, վոր բոլոր դեպքերում և ամեն տեղ յերեխաները պետք է զույգերով գնան և չհամարձակվեն շարքից դուրս գալ: Յենթադրենք, վոր յերեխաները գնում են հարթ դաշ-տով: Այս դեպքում առանձին կարիք չկա յերեխաներից պահանջել, վոր անպայման շարքերով գնան: Ընդհանրապես յերեխաները պետք է վարժվեն դասատվի կարգադրութեաններին. նրա ձեռքի շարժումից հասկանան, թե յե՞րը կարելի յե շարքերից դուրս գալ և թե յե՞րը պետք է շարքեր կազմել:

Կանոնավոր քայլելը միաժամանակ ուշ հոգնելու նախապայման-ներից մեկն է: Մեկ զույգը մյուս զույգից պետք է առաջ մեկնած մի ձեռքի հեռավորութեան վրա լինի, յերեխաներին պետք է վարժեցնել այդ բանին: Յեթե եքսկուրսիան ղեկավարում են 2 հոգի, ղեկավար-ներից մեկը գնում է շարքերի առաջից, իսկ մյուսը՝ հետևից: Իսկ յեթե ուղեկցողը մեկն է, նա պետք է գնա կամ շարքի հետևից, կամ կողքով, վորպեսզի հնարավորութեան ունենա բոլորին տեսնելու: Հեռավոր եքսկուրսիաների՝ տեղափոխութեան հետ կապված խնդիր-ներն ավելի բարդ են և պահանջները մեծ: Վորովհետև հեռավոր եքս-կուրսիաները մեր ուսումնասիրութեան նյութի մեջ չեն մտնում, ուս-տի այդ տիպի եքսկուրսիաների վրա շատ թուուցիկ կերպով կանգ կառնենք:

Հեռավոր եքսկուրսիաները պահանջում են հետևյալ աշխատանք-ները:

Ա. Մանրամասն մեակել եֆակուրսիայի ծրագիրը, նեկով՝

1. Նպատակը և վայրերը:

2. Մանրամասն մարշրուտը և հաճախման վայրերի հաջորդակա-նությունը:

3. Եքսկուրսիայի որչեկտները և նրանց ուսուցնասիրության հա-ջորդականությունը:

4. Եքսկուրսանտների քանակը և նրանց բժշկական քննու-թյունը:

5. Ուղեցույցներ, քարտեզներ և տեղեկանքներ ձեռք բե-րելը:

6. Նախորոք գրական-տեսական ծանոթություն եքսկուրսիայի որչեկտներին:

7. Ինչ իրեր և գործիքներ պետք է հետները վերցնել:

8. Եքսկուրսիայի նյութական ապահովման խնդիրները և ճիշտ նախահաշիվ կազմելը:

Բ. Եֆակուրսիայի աշխատանքները ղեկավարելը.

1. Նախնական ծանոթություն եքսկուրսիայի որչեկտներին՝ գանազան ուղեցույցների և տեղեկատուների միջոցով:

2. Կապվել եքսկուրսիոն—տուրիստական բազաների հետ:

3. Եքսկուրսիայի ապավորությունների և տեղեկությունների գրանցումը, նկարումը և գծագրումը:

4. Հաշվառումներ դրույցի, կոնֆերանսի, կամ զեկուցումների միջոցով:

Մինչդեռ զասարանային եքսկուրսիաները մեծ մասամբ կատար-վում են յուրաքանչյուր անգամ մի առարկայի գծով և դասի բնույթ են ունենում: Միանգամայն տարբեր բնույթ ունեն հեռավոր եքս-կուրսիաները. հեռավոր եքսկուրսիաները կապված են մի շարք առար-կաների հետ և չունեն դասի բնույթ. դրանք խոշոր կրթական նշա-նակություն ունեն, մի կողմից՝ հանդիսանում են վորպես աշակեր-տություն տեսականորեն ձեռք բերած տեղեկությունների կոնկրետա-ցում և ամփոփում, և մյուս կողմից՝ տալիս են նոր տեղեկություն-ներ, նոր պատկերացումներ, վորոնք կապված չլինելով առանձին դասի հետ, միաժամանակ կապված են մի շարք գիտելիքների հետ: Ինչպես մոտակա, այնպես և հեռավոր եքսկուրսիաների ժամանակ կարևոր է կարգապահություն պահպանել: Պետք է մի անգամ ընդ-միշտ հիշել, վոր յեթե կարգապահությունը շատ կարևոր է դասի ժա-մանակ, ավելի կարևոր է եքսկուրսիայի ժամանակ, վորտեղ չկան այն նորմալ պայմանները, վորոնք կան դասարանում: Ուստի եքս-կուրսիայի համար պետք է սահմանել վորոշ կանոններ, վորոնք պարտադիր են բոլոր եքսկուրսանտների համար:

Ընդհանուր առմամբ այդ կանոնները խմբվում են հետևյալ հար-ցերի շուրջը:

1. Անհրաժեշտ կարգապահություն և կոլեկտիվ համերաշխու-թյուն:

2. Եքսկուրսիայի ժամանակ կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի բարեկեցությունը կապված է մյուսների բարեկեցության հետ, ուստի ամեն անգամ և ամեն տեղ պետք է հոգ տանել ընդհանուրի հար-մարություն և անվտանգություն մասին:

3. Լավ վերաբերմունք ունենալ թե դեպի իր ընկերները և թե դեպի շրջապատը:

4. Եքսկուրսիայի ժամանակ չպետք է շտապել և աշխատանք-ները հապճեպ կատարել: Առանձին ուշադրություն պետք է դարձնել առողջապահական նվազագույն պահանջները կատարելուն:

5. Ղեկավարի կարգադրությունները, վորպես ընդհանուր կարգը պահպանելու և եքսկուրսիայի մասնակիցների անվտանգությունն ապահովելու միջոցներ, պետք է կատարվեն անհապաղ և անշե-ղորեն:

6. Անտեղի չտրանջալ դժվարությունների ժամանակ և առաջ չբերել բարոյալքում: Առանց եյական պատճառների չխախտել մարշ-րուտը, թե ժամանակի և թե վայրերը հաճախելու տեսակետից:

7. Առանց ղեկավարի թույլտվության չբացակայել հանգստա-նալու վայրերից, ինչպես և գիշերելու տեղից:

8. Ընկերների մեջ թյուրիմացություններ ծագելու դեպքում, ինչպես և թեթե հիվանդություն դեպքում, անմիջապես հայտնել դե-կավարին:

9. Մթերքները հանձնել ընդհանուր ոգտագործություն:

10. Սահմանել հերթապահություն:

11. Ունենալ որագրեր և սխտեմատիկ կերպով գրանցումներ կատարել:

12. Սահմանված մարշրուտը փոփոխության կարող է յենթարկ-վել միայն ղեկավարի համաձայնությունով:

Վերև հիշված պահանջները վերաբերում են թե հեռավոր և թե մոտակա եքսկուրսիաներին, իսկ հաջորդ հոգվածում նախատեսված հարցերը վերաբերում են միայն հեռավոր եքսկուրսիաներին:

9. ՈՐՎԱ ԺԱՄԱՆԱԿԸ ԴԱՍԱՎՈՐԵԼԸ

Եքսկուրսիայի ժամանակ չպետք է խախտել որվա ռեժիմի և առողջապահական կանոնները:

1. Առավոտները վեր կենալ վորոշած ժամանակին:

2. Մաքուր պահել անկողինը և հագուստը:

3. Մաքուր պահել մարմինը:

4. Մաքուր պահել սենյակը:

5. Ուտելուց և խմելուց հետո մաքրել ատամները:

6. Հում ջուր չխմել. վոտքով ճանապարհորդելիս քիչ ջուր խմել. սեղ հասնելուց առաջ մի փոքր ուտել, ապա ջուր խմել:

7. Սաստիկ հոգնածությունից հետո անմիջապես չպառկել քնելու. նախ մի թեթեւ զբոսնել, ապա պառկել քնելու. քնելուց առաջ վոտքերն անպայման լվանալ:

8. Քնել միշտ հանված սավանի պարկում:

9. Նշանակված ժամին պառկել քնելու և դադարեցնել զրույցը:

10. Եքսկուրսիա դուրս գալուց առաջ, ինչպես և հանգստյան կետերում, հոգալ բնական պահանջները:

Մի քանի խոսք ել եքսկուրսիայի ընթացքում պատահող դժբախտ դեպքերի և պատահարների մասին:

Յերկար ճանապարհորդության ժամանակ անախորժ դեպքեր կարող են պատահել. ճիշտ ե, մտածված և կազմակերպչորեն լավ դրված եքսկուրսիաների ընթացքում այդ դեպքերը կամ բոլորովին չեն լինում, կամ շատ պակասում են:

Ինչ կարող ե լինել եքսկուրսիայի ժամանակ.

1. Զանազան հիվանդություններ:

2. Եքսկուրսանտներից ճանապարհին հետ մնացողներ:

3. Ծանրոցների կորուստ և այլն:

Հիվանդություններ հեռավոր եքսկուրսիաների ժամանակ հաճախ են պատահում, մեծ մասամբ ստամոքսի խանգարման դեպքեր: Դրա գլխավոր պատճառը կերակրի փոփոխությունն է, հում ջուրը, մրգերը և զանազան վատորակ ուտելիքները: Ղեկավարը պետք է պայքարի դրա դեմ: Բոլոր գնումները պիտի կատարվեն ղեկավարի թույլտվությամբ:

Հիվանդություններն առաջանում են նաև մրսելուց, անհարմար վտանգավորներից: Ահա այս բոլորի դեմ պետք է ձեռք առնել կանխիչ միջոցներ:

Ավելի վատ կացություն է ստեղծվում վարակիչ հիվանդությունների դեպքում: Յեթե եքսկուրսանտներից մեկն ու մեկը վարակված է այս կամ այն հիվանդությամբ, պետք է նրան առանձնացնել և թողնել առաջին հարմար վայրում, վորտեղ կա հիվանդանոց և հատուկ հսկողություն, թողնելով նրա մոտ ղեկավարի ոգնականներից մեկին:

Յեթե բժշկական քննությունը հաստատում է, վոր հիվանդությունը լուրջ է, հիվանդի մոտ թողած անձնավորությունը միջոցներ է ձեռք առնում բժշկելու, միաժամանակ հեռագրում է հիվանդի ծընողներին, վորոնք կարող են ժամանակին հասնել և տնորինել հետագա անելիքները: Հանձնարարվում է ընդհանրապես հեռավոր եքսկուրսիաների ժամանակ ունենալ դեղեր և այլ պարագաներ, վորոնք

անհրաժեշտ են առաջին ոգնությունը ցույց տալու համար. որինակ՝

1. Խինին

6. Հոբմանի կաթիլներ

11. Բարային վազելին

2. Ասպիրին

7. Ինոզեմցիվի կաթիլներ

12. Մանանիսի ծեկեիք

3. Յոդ

8. Սպիրտ

13. Բժշկական ջերմաստ.

4. Կոլոդիում

9. Ատամի կաթիլներ

14. Վալերիանի կաթիլներ

5. Մաքուր սոդա

10. Տալկի փոշի

15. Վերքեր կապելու միջոցներ հիգիենայիկ բամբակ, բինտեր, մոմած թուղթ (կոմպրեսի համար), տաքացնող կոմպրեսներ, կտորներ ֆլանելից, կամ բումադելից, սպեղանի, թել, ասեղ և այլն:

Այդ իրերը պետք է մաքուր պահել անջրաթափանց պայուսակի մեջ: Նախորոք պետք է ծանոթանալ դեղերի գործածության յեղանակին:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՔՍԿՈՒՐՍԻԱ

Տարրական դպրոցում աշխարհագրական եքսկուրսիաների նպատակն է ծանոթացնել աշակերտներին՝ 1) մեր շրջապատի ընդհանուր տեսքին, 2) ռելյեֆին, 3) ջրերին, 4) ճանապարհներին, 5) ցամաքի և ջրերի աշխարհագրական զանազան ձևերին, 6) դետի ընթացքին և ջրի աշխատանքին, 7) յերկրի մակերևույթի և նրա կատարվող փոփոխություններին:

Այս բոլոր խնդիրները պահանջում են եքսկուրսիոն աշխատանք: Սակայն ինչպես պետք է դրանք դասավորել և քանի եքսկուրսիա պիտի կատարել:

Բոլոր դպրոցները միևնույն պայմաններում չեն գտնվում: Վերոջ դպրոցներում, եքսկուրսիայի որչեղանիքը մոտ լինելու դեպքում, կարելի չէ մի քանի եքսկուրսիա կատարել, իսկ հեռու լինելու դեպքում, սահմանափակվում են մեկ կամ յերկու եքսկուրսիայով: Տարրական դպրոցում աշխարհագրական եքսկուրսիաները գերազանցապես վերաբերում են 3-րդ դասարանի ծրագրային նյութերին «Կողմնորոշում տարածության մեջ», «տեղի ռելյեֆը», «մակերևույթի գետնային ջրեր» թեմաներում:

1. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նախ և առաջ ուսուցիչն ինքը լավ ուսումնասիրում է այն վայրը, ուր մտադիր է աշակերտներին տանելու:

Այնուհետև զրույցի միջոցով պարզվում է, թե ինչպիսի վայրեր են նրանք տեսել, ինչ գիտեն այդ վայրերի մասին: Զրույցից հետո դասատուն յերեխաներին ծանոթացնում է եքսկուրսիայի պլանին:

1. Մեխուրդիայի նպատակը՝ ծանոթանալ շրջակայքին և շրջակայքի տվյալների վրա աշխարհագրական հասկացողություններին:

2. Տեղագրական քարտեզի վրա ցույց է արվում եքսկուրսիայի մարշրուտի և վայրի տեղերը:

3. Եքսկուրսիայի ժամանակ ի՞նչ որչեղանքներ պետք է դիտվեն:

4. Ի՞նչպես պետք է աշխատել: Հիմնական դիտում դասարանով, նկարներով, ինքնուրույն աշխատանք. որինակ, յեթե գետը մի քանի վտակ ունի, ամեն մի ողակ ուսումնասիրում է մի վտակը, նրա ընթացքը և այլն. նույն ձևով ուսումնասիրում են ձորակները:

5. Հավաքում են բույսերի, քարերի, հողի, կոլեկցիաների նըմուշներ, գծագրումներ են կատարում:

Այնուհետև նշվում են այն հարցերը, վորոնց պատասխանն աշակերտները պետք է ստանան եքսկուրսիայի ժամանակ:

1. Հողի մակերեսի վրա ի՞նչ ձևեր են յերևում բարձր տեղից (բլրակի վրայից, սարից):

2. Ինչպե՞ս են ոգտագործում մարդիկ հողի մակերեսի զանազան ձևերը:

3. Վճր կողմում հողի մակերեսը ցածրանում է:

4. Ի՞նչ գետեր, գետակներ, լճեր, աղբյուրներ կան շրջակայքում:

5. Կա՞ն արդյոք գարնանային հեղեղների հտքեր և ի՞նչ ձև ունեն:

6. Դիտել, թե ինչպես է հողի մակերեսը փոխվել ընթացյան յերևութների ազդեցության տակ, և ինչպես է փոխվել մարդը:

7. Դիտել ձորակները և տեսնել, թե ինչպես են նրանք առաջ յեկել:

Չորակում գիտել հողի շերտերը:

8. Դիտել աղբյուրը. ինչպի՞սի ջուր ունի նա. մաքուր է, ամք է, թե՞ սառը. ջրի համը, վճրտեղից է ջուրը դուրս գալիս. հողի ի՞նչ շերտեր կան նրա հատակում:

9. Հետևել գետակի ընթացքին և դիտել հունը: Ափերի բարձրությունը: Նկատվում է արդյոք, թե նա ինչպես է վողողում ափերը. գետակն ուղիղ է հոսում, թե վողորապտույտ:

Չափել հոսանքի արագությունը. դրա համար պետք է չափել 10 մետր, հետո զցել մի տաշեղի կտոր չափած տեղի սկզբից և նայել ժամացույցին ու հետևել, մինչև վոր տաշեղը հասնի չափածի մյուս ծայրը: Դրել, թե վճրքան ժամանակում տաշեղն անցավ 10 մետր: Կողմնացույցով պարզել գետի հոսանքն ըստ հորիզոնի կողմերի:

10. Դիտել գետի ափերը. ափերի տարբերությունը. կա՞ն արդյոք կղզիներ, թերակղզիներ, ծոց:

11. Չի՞ յերևում արդյոք, վոր գետը փոխել է իր ընթացքը:

12. Կողմնացույցով իմանալ, թե առաջ գետը վճր կողմն է հոսել:

13. Ի՞նչ գյուղեր և քաղաքներ կան գետի ափերին:

Այնուհետև նույն պլանում ծրագրվում է, թե ինչպե՞ս պետք է մշակել եքսկուրսիայի ընթացքում հավաքած նյութերը:

2. ԵՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԸՆԹԱՑՔԸ

Դասատուն աշակերտներին տանում է մի բարձր տեղ, գորտեղից բավականաչափ հեռավորության վրա յերևում է շրջակայքը, այգիները, ցանքսերը, գետակները, ճանապարհները և այլն:

Այնուհետև նա առաջարկում է աշակերտներին նկարագրել, թե ինչ են տեսնում նրանք: Դասատուն լրացուցիչ հարցերով նրանց ուղղորդելուց դարձնում է աշխարհագրական հարցերի վրա, որի՞նակ՝ ինչպի՞սի մակերես է մեր առջևում. ինչո՞ւ գետակի ցածր ափը պատած է բանջարանոցներով. ինչո՞ւ այդտեղ շենքեր չկան. ինչո՞ւ գետը պտույտներ է անում:

Դիտում են տեղագրական քարտեզը. նրա վրա գտնում են իրենց տեղը. քարտեզով և կողմնացույցի ոգնությամբ վորոշում են գետի հոսանքը: Յերեխաներին առաջարկում է սխտեմատիկ նշել այն, ինչ վոր տեսնում են:

Հետո շարունակում են իրենց եքսկուրսիան, գնում են ձորակ. դիտում են ձորակի ճյուղավորումները, նկարում են և նշումներ կատարում:

Այսպիսով ուսումնասիրում են ռելյեֆի բոլոր ձևերը, ուշադրություն են դարձնում ձորակների առաջ գալու պատճառների վրա՝ նույնը և լճի, աղբյուրների ու գետակի նկատմամբ: Առանձին ուշադրություն պետք է դարձնել գետակի վրա, նրա քայքայիչ և բարդրություն պետք է դարձնել գետակի վրա, նրա քայքայիչ և բարդավաճող դերը հողի ռելյեֆի նկատմամբ: Այնուհետև նույն յեղանաքով գետը հողի ռելյեֆի նկատմամբ: Դիտում են գետի բարձր և ցածր ափերը, ավազուտները, վտակի գետաբերանը, ծանոթացնում են կղզի, թերակղզու, ծոցի կոնկրետ ձևերին: Քննարկում են, թե ինչպես են դրանք առաջացել, վորոշում են գետի ընթացքը և հոսանքի առաջանալու պատճառները: Այնուհետև ծանոթանում են ջրաշինարարական աշխատանքներին. ափերի ամրացումը, պատվարները, ճահճները, նրանց չորացնելը, վողողման ցանցը, ջրի ոգտագործումն ելեկտրոֆիկացիայի նպատակով:

3. ԵՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Եքսկուրսիայի տված նյութերի մեծ մասը պահանջում է դասաբանական մշակում: Մշակումը դասարանում կատարվում է հետևյալ կերպ: Աշակերտները պատմում են իրենց գիտածը (զանազան կետերից), ճշտում են աշխարհագրական հասկացողությունները—տափառակ, հարթավայր, բլուր, սար, ձոր, լիճ, կղզի, թերակղզի և այլն:

Այնուհետև աշակերտներին առաջարկվում է կարգի բերել, այսինքն

քըն լրացնել իրենց նկարները՝ դնել պայմանական նշանները և գու-
նավորել քարտեզի նման: Այսպիսով աշակերտները կազմում են
իրենց տետրակի մեջ տեղագրական քարտեզ:

Նման մոտեցումը նպաստում է, վոր աշակերտները միանգամայն
գիտակցաբար ուսումնասիրեն քարտեզը և կարգան աշխատանք:

Իսկ վորպես տնային աշխատանք՝ առաջարկվում է սովորել
դասագրքից համապատասխան գլուխը և ոգտվել տեղագրական
քարտեզով:

4. ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե 3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԾԱՆՈԹԱՅՆԵԼ ՀՈՂԻՆ, ԱՎԱ- ԶԻՆ, ԿԱՎԻՆ ՅԵՎ ԳՐԱՆԵՏԻՆ.

Եֆևիուսիա—յերիու դառ:

Եֆևիուսիայի նպատակը—աշակերտներին ծանոթություն տալ հո-
ղի մասին:

Եֆևիուսիայի պլանը:

1. Զրույց եքսկուրսիայի նպատակի մասին. ստուգել եքսկուր-
սիայի պիտույքները:

2. Դիտել հողաշերտերը. յեզրակացություն—խնչ և հողը:

3. Հողաշերտերի չափումը և գծագրումը տետրերում, կամ ծոցա-
տետրերում:

պիտույքներ. Տոպրակներ, տուփեր, ծոցատետրեր, ցանց, մա-
տիտ, չափեր, թուղթ և թղթի տոպրակներ, կամ տուփեր՝ հողի նմուշ-
ներ վերցնելու համար:

Մինչև եքսկուրսիա կազմակերպելը, դասատուն պարտավոր է
ինքը մանրամասն ուսումնասիրել եքսկուրսիայի վայրը: Նպատակա-
հարմար է ընտրել մի դարափուլ, կամ վոդոզակ (водъёз), վորտեղ
հողի շերտերը պարզ տարբերվում են իրարից, վորևե սև մասը և
տակի ավելի բաց գույն ունեցող մասերը՝ յենթահող, վորտեղ յերե-
վում են նաև լեռնային տեսակները ավազ, բույսերի արմատները,
վորոնք անցնում են հողի միջով:

Եքսկուրսիայից անմիջապես առաջ դասատուն կրկին անգամ
աշակերտներին ծանոթացնում է եքսկուրսիայի նպատակին և
նյութին:

5. ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆ ԱՆՑԿԱՅՆԵԼԸ

Եքսկուրսիայի վայրը հասնելուց հետո, աշակերտները մի քա-
նի ըուպե հանդստանում են: Ապա դասատուն սկսում է եքսկուրսիա-
գառը: Նա ցույց է տալիս հողի շերտերը և առաջագրում է դիտել և
ապա պատմել իրենց դիտածի մասին:

Աշակերտները դիտում են և ապա պատմում են, վոր դարափուլի կամ
վոդոզակի վերևում բուսել են ծառեր, խոտ, վոր հողը սև գույն ունի,

ներքևում հողն ավելի պարզ գույն ունի, հետո դեղին է, ավազ է,
յերևում են ծառերի արմատները:

Դասատուն հարցնում է, թե ծառերի արմատները հողի վոր շեր-
տում են գտնվում: Աշակերտները դիտում են և պատասխանում՝ գըլ-
խավորապես վերին շերտում. ավազի շերտում արմատներ չեն
նկատվում:

Ուրեմն հողի վոր շերտն է բուսահող անվանվում:

Աշակերտ—բուսահող կոչվում է հողի մուգ շերտը:

Դասատու—ուրեմն ի՞նչ հատկանիշներ ունի այդ շերտը:

Աշակերտ—այդ շերտում բուսում են բույսերը:

Բուսահողի մասին այդ 3-րդ դասարանի համար բավական է:

Սակայն անհրաժեշտ է ծանոթացնել, վոր բուսահողում միջատ-
ներ կան, վորպես գաղափար փտանյութի (перегной) մասին, վորը
նրանք ուսումնասիրելու յեն հետագայում:

Այնուհետև դասատուն յեզրակացությունը ձևավորում է հետև-
յալ կերպ՝ բուսահող կոչվում է հողի վերևի մուգ շերտը, վորտեղ
բուսում են բույսերը: Դասատուն աշակերտներին առաջարկում է
կրկին անգամ ուշադրությամբ նայել այդ շերտը և իմանալ ի՞նչ կա
այնտեղ:

Յերեսխաներն ասում են, վոր փտած տերևներ կան, բույսերի
մնացորդներ, գանաղան միջատներ կենդանի և մեռած վիճակում:
Բուսահողի կազմության մասին ամփոփումներ չանելով (այդ հատուկ
դասի նյութ է) դասատուն յերեսխաներին հասկացնել է տալիս, վոր
կենդանիները, բույսերը և արմատները, ժամանակի ընթացքում
փտում են և խառնվում այդ շերտի հողի հետ:

Այդ պրոցեսը շատ պարզ և հասկանալի կերպով կարելի յե պար-
զել տերևի փոփոխությունների վրա. կանաչ տերև, դեղնած, գորշ
գույն ստացած, քայքայված: Այնուհետև դասատուն աշակերտներին
առաջարկում է չափել բուսահողի շերտի հաստությունը, հետո մյուս
շերտերի և բլոկնոտներում կամ տետրերում նկարել այդ շերտերի
հաստությունը թվերով նշանակվում է նկարի վրա: Ավելի լավ կլինի
այդ շերտերը տարբեր գունավոր մատիտներով գունավորվեն:

Դասատուի ցուցումներով աշակերտները վերցնում են այդ շեր-
տերի նմուշները: Դրանով վերջանում է եքսկուրսիայի աշխատանքա-
յին մասը:

Նույն եքսկուրսիան կարելի յե ոգտագործել նաև մյուս դասերի
համար եքսկուրսիոն նյութեր հավաքելու—գրանիտ, ծաղիկներ, ավազ,
խիճ և այլն: Դասարան վերադառնալով՝ աշակերտները հավաքած
նյութերը դասավորում են առանձին տուփերի մեջ և համապատաս-
խան մակագրություններ անում այդ տուփերի վրա:

Տնային աշխատանք. Դասագրքով կարդալ և սովորել «հող» գլուխը
(եջ 54):

2-րդ դաս «Հող» (եքսկուրսիայի նյութերի մշակում):

Դասի ընթացքը.

1. Նախ վեր հիշել այն, ինչ իմացանք եքսկուրսիայի ընթացքում, ապա այսօր կիմանանք, թե ի՞նչից է կազմված հողը:

Աշակերտները դիտում են հողի նմուշները: Նմուշները լինում են բոլոր աշակերտների մոտ: Իմանալու համար թե հողն ինչից է կազմված, պետք է մի քանի փորձեր կատարել:

Փորձ 1. Դասատուն տաքացնում է հողը, հողից գոլորշի յե բարձրանում. մի վորևե առարկա բռնում են այդ գոլորշու վրա առարկան ծածկվում է ջրի կաթիլներով:

Յեզրակացություն. Հողի մեջ ջուր կա, վորն անհրաժեշտ է բույսերին: Բույսերն իրենց արմատներով ջուրը ծծում են հողից, ջրի հետ միասին ընդունում են նաև սննդատու նյութեր, վորոնք ջրի մեջ լուծված են:

Փորձ 2. Դասատուն շարունակում է հողը տաքացնել, լավ այրում է: Աշակերտները հետևում են հողի գույնի փոփոխմանը: Մուգ գույնից հողն սկսում է ավելի պարզ գույն ստանալ — գորշ, շեկ և այլն:

Յեզրակացություն. Հողի մեջ այրվեցին փտանյութերը — բույսերի ու կենդանիների մնացորդները: Գրում են՝ հողի մեջ կա ջուր և փրտանյութ: Փտանյութը ստացվում է բույսերի և կենդանիների մնացորդները փտելուց:

Կարգում են դասագրքում յեղած փորձերը, և «հողի կազմության» գլուխը ու այդպես շարունակում նյութի ուսումնասիրությունը:

6. ԱՇՈՒՆ

Բերենք բնագիտական եքսկուրսիայի մի ուրիշ որինակ՝ «Աշուն» թեմայի վերաբերյալ, 1-ին դասարանում: Բնագիտության դասընթացի առաջին թեման է այդ:

1-ին դասարանում աշակերտները նոր են դպրոց յեկել, դեռ բոլորովին չեն ընտելացել դպրոցական նիստ ու կացին, ուսման գործին:

Նպատակահարմար է աշխատանքն սկսել զրույցով, թե վճռեղ են յեղել ամռան ամիսներին, ինչ տպավորություններ ունեն, իրենք ինչով են զբաղվել: Թեման իր բովանդակությամբ աշակերտների մեջ մեծ հետաքրքրություն առաջ կբերի: Զրույցի միջոցով դասատուն պետք է ծանոթանա բնության վերաբերյալ՝ աշակերտների ունեցած պատկերացումներին. որինակ, ինչ գիտեն նրանք բույսերի և կենդանիների յեղանակի մասին և այլն: Զրույցից հետո վորոշում են, թե վոր ուր պետք է եքսկուրսիա գնան և վորտեղ: Եքսկուրսիայի նպատակը պետք է լինի բնագիտության ծրագրի սկզբնական խնդիրների

կոնկրետացումը. ծանոթություն ծառերի և խոտաբույսերի մի քանի տեսակներին:

Աշակերտները ծանոթանում են այդ ծառերի տեսակներին, դիտում են տերևների գույներն ու տարբեր տեսակի ծառերի տերևներից և ճյուղքերից բերում հեաները. նույնն անում են և խոտաբույսերի նկատմամբ: Եքսկուրսիային հաջորդող յերկրորդ դասը նվերվում է եքսկուրսիայի նյութերի մշակմանը. ծառեր նկարելը, տերևներ դասավորելը և ստվարաթղթի վրա կպցնելը, բերած նյութերից կոլեկցիաներ կազմելը, դասարան զարգարելը:

Այնուհետև դասատուն դասագրքից կամ այլ բրոշյուրից կարգում է համապատասխան հողված աշնան մասին:

Յերկու կամ յերեք շաբաթից հետո (նայած աշնան բնության փոփոխվելուն) դասատուն վերստին եքսկուրսիա յե կազմակերպում: Այս անգամ նա աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է աշնան բնության և յերևույթների փոփոխման վրա, տերևների գույնավորման, բույսերի սերմերի չորանալու վրա, թե ինչպես են թռչունները պատրաստվում չվելու: Դասատուն առանձնապես աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է այն փոփոխությունների վրա, վորոնք տեղի յեն ունեցել առաջին և յերկրորդ եքսկուրսիաների միջև յեղած ժամանակամիջոցում:

Յերեխաները պարզ ձևով նկարում են՝ թռչուններ, ծառեր, տերևներ:

Տերևները դասավորում են ըստ գույների աստիճանական փոփոխման կանաչ տերև, դեղնավուն, դեղին, գորշ և չորացած:

7. ԱՅՈՒՆ ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

Զուտ ծրագրային եքսկուրսիաներից դուրս, դպրոցում անշուշտ պետք է կազմակերպվեն արտագրոցական եքսկուրսիաներ: Արտագրոցական եքսկուրսիաները չպետք է լինեն դպրոցական եքսկուրսիաների կրկնությունը. արտագրոցական եքսկուրսիաներում չպետք է մեխանիկորեն կրկնել նույն ձևերը, ինչ ձևեր և մեթոդներ գործադրվում են դասարանային եքսկուրսիայի ժամանակ:

Արտագրոցական եքսկուրսիաների նպատակն է մանուկների և դեռահասների համար խելացի ժամանց ստեղծել:

1) Ընդարձակել աշակերտների մտավոր կրթական հորիզոնը՝ նոր առարկաների և նոր հասկացությունների ծանոթացնելու միջոցով:

2) Ոժանդակել յերեխաների ֆիզիկական դաստիարակության:

3) Ոժանդակել աշակերտների գեղարվեստական դաստիարակության:

Նման արտագրոցական եքսկուրսիաների ամենատարածված և ամենամատչելի ձևն եքսկուրսիա-գրոսանքներն են, վորպես կուլ-

տուրական ժամանցի լավագույն միջոցներինցմ եկը տարվա զանազան
յեղանակներին: Եքսկուրսիա-զբոսանքները, չկերելով եքսկուրսիա-դա-
սի տարրերը միաժամանակ, ինչպես այդ պահանջվում ե. եքսկուր-
սիա-դասերի ժամանակ, պետք է լավ մտածված և նախապատրաստ-
ված լինեն: Մտածված ու խելացի կազմակերպված եքսկուրսիա-զբո-
սանքներն անագին կրթական-դաստիարակչական նշանակություն ու-
նեն: Մասնավորապես գյուղերում, վորտեղ յերեսաների խելացի և
կուլտուրական ժամանցի համար հարմարությունները սահմանափակ
են, այդպիսի եքսկուրսիաները մեծ հաճույք կարող են պատճառել
աշակերտներին:

Եքսկուրսիա-զբոսանքների նպատակների մեջ մտնում են յերե-
խաների առողջապահական խնդիրները—բացոթյա անցկացնելը, արևից,
ողից և ջրից ոգտվելու առատ հնարավորությունները: Կազմակերպ-
չորեն ձիշտ դրված եքսկուրսիաները զարգացնում են յերեսաների
մեջ կարգապահություն, կոլեկտիվիզմ: Այնուհետև աշակերտները
ձեռք են բերում ռազմական վորոշ ունակություններ՝ ուղիղ քայլել,
աչքաչափի վարժություններ, տոկունություն, տեղի կողմնորոշում,
բարձր դասարանների աշակերտները ձեռք են բերում քարտեզով
ոգտվելու, հասարակ հետախուզություններ կատարելու, պահած առար-
կաները գտնելու ունակություններ, սիգնալիզացիա և այլն:

Մեծ տեղ պետք է տալ մանկական խաղերին և յերգերին:

Դնալիս եքսկուրսիաները հանդիպում են ավագուսներին, առ-
վակներին, ցանկապատներին: Դպրոցականները պետք է սովորեն, թե
ինչպես պետք է հաղթահարել այդ դժվարություններն ու արգելքնե-
րը, կիրառելով ավելի նպատակահարմար և քիչ ենթերգիա պահանջող
շարժումներ:

Դաստիարակչական խոշոր նշանակություն ունեն աչքաչափի
վարժությունները: Վորևե առարկա նկատի առնելով՝ ղեկավարը հարց
է տալիս, թե քանի մետր, կամ քանի քայլ հեռավորություն վրա յե այդ
ծառը, ջրաղացը, արտը և այլն: Այնուհետև մեկ կամ մի քանի աշա-
կերտ քայլերով, կամ չափերիդով ստուգում են: Այդ փորձի հիման վրա
աշակերտները կրկնափորձ են կատարում. այդպիսով յերեսաների
մեջ կոնկրետ պատկերացումներ են զարգանում տարածություն վերա-
բերյալ:

Եքսկուրսիա-զբոսանքների ժամանակ հնարավոր է զարգացնել
նաև յերեսաների մյուս զգայարանները—խոզությունը, շոշափե-
լիքը:

Այդ եքսկուրսիաներում խոշոր տեղ պետք է տալ գեղարվեստա-
կան դաստիարակչական խնդիրներին: Աշակերտներին պետք է սովոր-
րեցնել ճանաչել բնությունը, հետաքրքրվել բնության պատկերներով.
նրանց մեջ պետք է առաջացնել հույզեր, բնության գեղեցկություն-
ներով, բազմազան և բազմերանգ գույներով:

Մեծ տեղ պետք է տալ մեր շինարարությունը, գեղանուններին
ծանոթանալու գործին: Պետք է աշակերտի մեջ այդ հոյակապ
աշխատանքի պաթոսն առաջանա, վոր նա ըմբռնի, ապրի դրանով,
վորպեսզի նա հասկանա, վոր միայն խորհրդային իրավակարգում,
սոցիալիզմի յերկրում հնարավոր է այդպիսի շինարարություն:

Եքսկուրսիաներ կարելի չե կազմակերպել դեպի կոլտնտեսային
և խորհտնտեսային դաշտերը, ծանոթանալու գյուղատնտեսական աշ-
խատանքներին, գյուղատնտեսական մեքենաներին և նրանց աշխա-
տանքներին:

Եքսկուրսիաների ժամանակ աշակերտները կարող են նկարել,
զբանցել իրենց տետրերում: Եքսկուրսիան պետք է ղեկավարի դաս-
տիարակը, չեթե եքսկուրսիա յե գնում մեկ դասարան. իսկ չեթե մի
քանի դասարան են գնում, կամ ամբողջ դպրոցն է գնում, եքսկուր-
սիան ղեկավարում է դպրոցի վարիչը կամ դիրեկտորը, իսկ նրան
ոգնական են լինում դաստիարակները:

Պետք է ամեն կերպ աշխատել, վոր եքսկուրսիան ձանձրույթ
չառաջացնի, վորովհետև ձանձրույթին հետևում է հոգնածությունը:
Այդ դեպքում եքսկուրսիայի ամբողջ եֆեկտը կորչում է:

Ինչպիսի եքսկուրսիա լինի, առաջին հերթին պահանջում է նա-
խապատրաստական աշխատանք: Անհրաժեշտ է, վոր ղեկավարը նա-
խապես ծանոթ լինի եքսկուրսիայի վայրին: Եքսկուրսիայի ընդհա-
նուր նպատակների մասին պետք է նախորոք հայտնել աշակերտնե-
րին, պետք է վորոշել որվա ռեժիմը:

Եքսկուրսիա-զբոսանքի տևողությունը պետք է լինի միջին հաշ-
վով մոտ 4 ժամ, բայց վոչ ավելի, քան մեկ ժամ գնալու, մեկ ժամ
վերադառնալու և 2 ժամ բուն եքսկուրսիայի համար:

8. ԵՔՍԿՈՒՐՍԻՈՆ—ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Խոսելով եքսկուրսիաների մասին՝ չպետք է մոռանալ տուրիս-
տական աշխատանքները, վորոնք նույնպես եքսկուրսիաների մի ձևն
են հանդիսանում:

Այդ առթիվ մենք կբերենք ՌՍՖՖՀ Լուստողկոմատի 1935 թ.
մարտի 4-ի № 178 հրամանից վորոշ կետեր («Бюллет. НКП
№ 9, 1935 թ.»), վորտեղ գեղեցիկ կերպով տրված են այդ եքս-
կուրսիայի թե նշանակությունը և թե ձևերը:

«Բացառիկ նշանակություն տալով եքսկուրսիոն-տուրիստական
աշխատանքներին կոմունիստական դաստիարակության գործում, ինչ-
պես և դպրոցում ձեռք բերած գիտելիքները խորացնելու և մա-
նուկների առողջ հանգիստը կազմակերպելու տեսակետից առաջար-
կում եմ.

1. Լուսրաժիշների վարիչներին, տարրական, վոչ լրիվ միջնա-
կարգ և միջնակարգ դպրոցների դիրեկտորներին և վարիչներին ու

եքսկուրսիոն տուրիստական կայանների գիրեկտորներին ապահովել տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների աշակերտների կանոնավոր եքսկուրսիոն-տուրիստական միջոցառումները՝ կազմակերպելով այդ աշխատանքները հանգստի օրերին, ձմեռային, գարնանային և առավելապես ամառային արձակուրդներին:

2. Բոլոր դպրոցների գիրեկտորներին և վարիչներին.

ա) Աշակերտներին համար կազմակերպել չերթեր, եքսկուրսիաներ, արշավներ—եքսկուրսիոն և տուրիստական համապատասխան միջոցառումներով:

բ. Եքսկուրսիոն-տուրիստական աշխատանքներում ամեն կերպ նպաստել մանկական ինքնագործունեյության կազմակերպման պատանի տուրիստների, պատանի յերկրաբանների, բնագետների խումբակներ ստեղծելով:

Եքսկուրսիոն-տուրիստական աշխատանքներին պետք է ներգրավել մանկավարժներին (աշխարհագրության, պատմության, բնագիտության դասատուներին և այլն), կոլվարներին և ծնողական ակտիվին:

գ) Մանուկների եքսկուրսիոն-տուրիստական աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել գրամական ֆոնդ գրավելով Ոժկոմի, շեֆ հիմնարկի, ձեռնարկի, ծնողների, հասարակայնության միջոցները:

4. Շրջանային և քաղաքային կենտրոններում ամառվա շրջանում կազմակերպել գլուղերից յեկող աշակերտության ընդունելությունը և մանկավարժական սպասարկումը:

Այնուհետև հրամանում խոշոր տեղ ե արվում տեղագիտական խնդիրների ուսումնասիրության և թանգարաններ հաճախելուն:


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ

ԵՔՍԿՈՒՐՍԻՈՆ ՄԵԹՈԴԸ, ՎՈՐՊԵՍ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴ

1. Եքսկուրսիոն մեթոդի նշանակությունը և եյությունը	3
2. Եքսկուրսիաների բնույթը	4
3. Եքսկուրսիան վերպես մեթոդ	5
4. Եքսկուրսիոն մեթոդի հիմնական հատկանիշները	7
5. Նախապատրաստական աշխատանք և պլանավորում	17
6. Եքսկուրսիա կազմակերպելը ե եքսկուրսիա տանելը	19
7. Աշխատանքներն եքսկուրսիայից վերադառնալուց հետո	22
8. Եքսկուրսիաները կազմակերպելու տեխնիկան	24
9. Որվա ժամանակը դասավորելը	27

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՔՍԿՈՒՐՍԻԱ

1. Նախապատրաստական աշխատանքներ	29
2. Եքսկուրսիայի բնթացքը	31
3. Եքսկուրսիայի մշակումը դասարանում	31
4. Խնչպես պետք է 3-րդ դասարանում ծանոթացնել հողին, ավազին, կավին ե գրանիթին	32
5. Եքսկուրսիան անցկացնելը	32
6. Աշուն	34
7. Այլ եքսկուրսիաներ	35
8. Եքսկուրսիոն-տուրիստական աշխատանքներ	37



Կա

<< Ազգային գրադարան

NL0223261

ԳԻՆԸ 60 Կ.

390

47. 444 u.



Ա. ХУДОЯН

Методика и техника организации экскурсий

Гиз ССР Армении, Ереван, 1936